Երիտթուրքերի և սիոնիստների միջև հաստատվել էր լիակատար փոխըմբռնում։ Սալոնիկում մեծ թվով հրեաներ էին ապրում (բնակչութիւնը բաղկացած էր 60 հազար սաֆարտիկ հրեաներից, 20 հազար մահմեդականներից, 40 հազար հույներից, 20 հազար դավանափոխներից (ղեոնմե) և 3 հազար եվրոպացիներից)։ Հրեաների ճնշող մեծամասնութիւնը իտալական քաղաքացիութիւն ուներ, օգտվում էր կապիտուլյացիոն պայմանագրերից և ենթակա չէր սուլթանի օրենքներին։ Սրանք իտալական մասոնական ժողովարանի անդամ էին։ Նրանց տները զերծ էին ոստիկանութեան խուզարկութիւններից։ Սրանց կարող էին դատել իրենց հյուպատոսութիւնների կից գործող դատարանները։ Այս հրեաներն էլ կազմեցին «Միութիւն և առաջադիմութիւն» կուսակցութեան հիմնական կորիզը։ Զերծ հետապնդումներից, սրանք հավաքվում էին տներում, կազմում պլաններ, պատասպարում սուլթանի կողմից հետապնդվող քաղաքական փախստականներին (66, էջ 20)։ Պատահական չէր, որ Սալոնիկում, այս միջավայրում երիտթուրքերի կենտկամը մնաց, գործեց, իր համագումարները հրավիրեց մինչև 1911 թվականը։ Այստեղ բազմաթիվ հրեական միութիւններ և կազմակերպութիւններ էին գործում, որոնց շարքում աչքի էր ընկնում «Ալլանս Իզրաէլիթ Յունիվերսելը»։ Հրեա գործիչներ Փ. Ռիսալը (Ժողով Նեհամա), Նահումը, Պենարոյան և ուրիշներ և՛ սոցիալիստներ էին, և՛ սիոնիստներ, կապված էին ֆրիմասոնութեան հետ։

Հավատափոխները կամ դեոնմենները ժամանակին Իսպանիայից եկած հրեաներն էին, որ դիրքի և հարստութեան տեր էին դարձել։ Նրանք հիմնականում զբաղվում էին միջնորդ առևտրով Սալոնիկում, էդիրնեում և այլ քաղաքներում։ Սրանցից ոմանք «իզմիրլի» էին կոչվում՝ ածիլած կզակներով, մյուսները՝ «սաբաթայի որդիներ»՝ ածիլած գլուխներով։ Երրորդները պատկանում էին դեոնմենների «Օսման պապա» ուղղութեանը։ Սրանք իրենց սովորութիւններով, ուրբաթ օրերը մզկիթ հաճախելով ավելի իսլամացածներն էին։ Զավիդ բելը սրանց էր պատկանում (13, էջ 13)։

Խոնդոնում հրատարակվող «Միդլ իստերն ստադիս» պար-

բերականը 1971-ին (Հատոր 7, № 1, էջ 89—104) հրապարակեց երիտթուրքական շարժումը բնութագրող, իթթիհադականների հակահայկական քաղաքականության ակունքները բացահայտող մի շատ կարևոր փաստաթուղթ։ Այդ փաստաթուղթը երիտթուրքական հեղափոխությունից հետո Կ. Պոլսում անգլիական դեսպան նշանակված Զ. Լոութրի (1858—1918) հանգամանալի զեկուցագիրն էր, որ նա 1910-ի մայիսի 29-ին հղել էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Լարդինգին։ Վավերագիրը Ֆորին օֆիսի արխիվում հայտնաբերել և հանրության ուշադրության է հանձնել պատմաբան Էլիս Քեդուրին ԵՊԻՍՏՈՐԵՆԵՐԸ, Ֆրիմասոնները և Գրեաները՝ վերտառությամբ։ Երիտթուրքների հայաստան քաղաքականության հանգամանքներն ուսումնասիրելու և բնութագրելու տեսակետից այս փաստաթուղթը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, ինչում կարող է համոզվել յուրաքանչյուր ոք, ծանոթանալով նրա բովանդակությանը։

Ակներև է, որ վավերագրի իսկական հեղինակ պետք է համարել Կ. Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպանատան հնագույն ու ազդեցիկ դրագոման (թարգման) Զ. Լ. Ֆիցմորիսին (1865—1939), որը խցկվել էր երիտթուրքական Ֆրիմասոնության խորքերը, նրա գաղտնիքները բացահայտելու, դրանք անգլիական գաղութատիրության շահերին ծառայեցնելու նպատակով։ Ֆիցմորիսը ոմանց կողմից ներկայացվում է որպես այդ պահին Կ. Պոլսում անգլիական գլխավոր և ազդեցիկ դեմք, որին, ըստ էության, ենթարկված էր նույնիսկ դեսպան Լոութրը (78, էջ 90)։

Դեսպան Լոութրի զեկուցագրերից կարելի է եզրակացնել, որ երիտթուրքներն ավելի վատն էին քաղաքականության մեջ, քան Արդու Համիդը։ Նա երիտթուրքական իշխանության գլուխ կանգնած մարդկանց համարում էր «չար» և «ոչ կոմպետենտ», «ծախու» և «ամանկամիտ» (78, էջ 90)։

Հատկանշական է, որ անգլիացի դիվանագետները, մասնավորապես դեսպան Լոութրը երբեմն երիտթուրքական կոմիտեն անվանում էր Միության և առաջադիմության հրեական կոմիտե, խոսում էր Ֆրիմասոնների և հրեա երիտթուրքների դաշինքի մասին, այն մասին, որ հրեաները երիտթուրքների գլխավոր ոգեշնչողներն էին (78, էջ 91)։ Էլիս Քեդու-

րին գրում է, որ օսմանյան կայսրությունը հրեաների ձեռքին դարձել էր մի գործիք հրեական պետության ստեղծումն իրականացնելու ճանապարհին (78, էջ 92)։ Իսկ մինիստր Լարդինգն իր հուշերում գրել է, թե օսմանյան կայսրությունը պատմաբանական կառավարման տարիներին իրականում դառնում էր հրեաներին ենթակա ծախու-երիտթուրքական կոմիտեի կողմից գլխավորվող բանակի իշխանության ներքո (78, էջ 104)։

Հետաքրքրական է, որ արաբական շարժման մահմեդական ղեկավարներն այն տարիներին կասկածի տակ առան Միություն և առաջադիմություն կոմիտեի անկեղծությունը հրեաների և Ֆրիմասոնների հետ նրա ղեկավարների ունեցած սերտ կապերի հետևանքով։

Էլիս Քեդուրինն այս բանը ցույց է տալիս, հենվելով մասնավորապես պրոֆեսոր Z. N. Zeine-ի «The Emergence of Apab Nationalism» (Beirut, 1966) գրքում բերված փաստերի վրա (88, էջ 104)։

Ընթերցողի մոտ զգվանք է առաջացնում հայազգի այն մարդկանց քստմենլի վարքագիծը, որոնք ոչ միայն ծառայում էին երիտթուրքական պետական մարմիններում, ոչ միայն դարձել էին իթթիհադական, այլև իրենց դիրքը, կարիերան պահելու համար անդամագրվել էին Ֆրիմասոնական ժողովարաններին, համագործակցում էին հրեական կաղմակերպությունների հետ (78, էջ 100)։

Ինչ Քեդուրինն հավաստում է, որ 1919 թվականի Փարիզի խաղաղության կոնֆերանսի մասնակից բրիտանական պատվիրակների համար Ֆորին օֆիսի պատմագիտական բաժինը պատրաստել էր տեղեկատու գրքեր։ Դրանցից առաջինը Առնոլդ Թոլբրիի «Մահմեդականների պատմություն» գիրքն էր, որտեղ նա գրել է, որ «Սալոնիկի հրեաներն անբաժանելի են Միություն և առաջադիմություն կոմիտեից» (78, էջ 104)։

Է. Քեդուրինն գրում է, որ հրեաները և երիտթուրքերը միավորվել էին Լոտին պլան մղելու հայերին, հույներին, արաբներին, նվազեցնելու նրանց դերն ու տեղը կայսրության քաղաքական կյանքում։ Նա փորձում էր համոզել, որ հրեա մեծահարուստները ասում էին ցարական Ռուսաստանը, իսկ

Անգլիան, լինելով Ռուսաստանի դաշնակիցը, նրա դեմ էր տրամադրում հրեաներին՝ վերջիններս երիտթուրքերի հետ սիրախաղում էին նույնպես հակաանգլիական հողի վրա։ Նա ցույց է տալիս, որ Միություն և առաջադիմություն կոմիտեն, ֆրիմասոնությունը և հուգալու մերտ և խճճված կապերի մեջ էին (78, էջ 92—93)։

Փաստաթուղթը որոշակի պատկերացում է տալիս թուրքական գործերում անգլիական դիվանագիտության նրբին մեթոդների ու մոտեցումների մասին։ Անգլիական դիվանագետներն ուսումնասիրում էին կացությունը, քաղաքականությունը կառուցում այն փոփոխությունների հաշվառումով, որ տեղի էին ունենում երիտթուրքական իրականության մեջ։ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր սըր էդ. Գրեյը շտապել էր երիտթուրքական հեղափոխությունը «հիասթափ» հռչակել (78, էջ 90)։ Այլ, ընդհանրապես, արևմտաեվրոպական բուրժուական քաղաքագետները գովասանքներ շռայլեցին երիտթուրքական հեղաշրջման չափավորության հասցեին, ճանաչելով տարիներ շարունակ եվրոպական մայրաքաղաքներում ծվարած երիտթուրք պարագլուխներին, իմանալով նրանց զստակարգային պատկանելիությունը, նրանց քաղաքական հավատամքը։

Այս փաստաթղթի բովանդակության կարևորությունն այն է, որ ցույց է տալիս Կ. Պոլսում իշխանության գլուխ անցած Սալոնիկի երիտթուրքական սպաների ռեալ քաղաքականության նկատմամբ անգլիական դիվանագետների դիրքորոշումը։ Ասենք նաև, որ նման վավերագրերի նշանակությունը մեծ է, քանզի ցայսօր համաշխարհային պատմագիտությունը զրկված է երիտթուրքական գործունեությանը վերաբերող թուրքական պետական արխիվների հարուստ նյութերից օգտվելու հնարավորությունից։

Անգլիայի արտաքին գործերի մինիստր Հարդինգին լուծբերը քաղմակողմանի պատկերացում է տալիս Սալոնիկի սիոնիստական կազմակերպությունների, հրեա բնակչության մասին։ Նա հիշեցնում էր, որ Փարիզի ու Սալոնիկի երիտթուրքական շարժումները կապված չէին միմյանց հետ։ Ըստ նրա, Սալոնիկում 140 հազար բնակչից 80 հազարը իսպանական հրեաներ էին, 20 հազարը՝ սարեթայ լեռն աղանդից

կամ կրիստո հրեաներ, որոնք արտաքինապես էին մահմեդականություն ընդունել։ Սրանցից շատերը իտալական հպատակություն ունեին և որպես ազատ մասուններ հարում էին իտալական ժողովարաններին։ Հոռմի հրեա քաղաքագլուխ Նաթանը համոզված մասուն էր։ Դեսպան Լոուբերը գրում էր, որ Բուալիայի հրեա վարչապետներ Լուգատին և Սոնինոն, որոշ սենատորներ նույնպես մասուններ էին։ Նրանք պնդում էին, թե ծագումով «հին շոտլանդացիներ էին» և հետևում էին նրանց սովորույթներին։ Սալոնիկի հրեա ազդեցիկ մասուններից հմանուել Կարասոն, որ դարձել էր օսմանյան պառլամենտի ղեկուսատ, ժամանակին հիմնել էր «Մակեդոնիա Ռիզորտա» օթյակը, որի մեջ ընդգրկված երիտթուրք սպաների և ոչ զինվորականների միջոցով հրեական ազդեցություն էր տարածել Թուրքիայի նոր զարգացումների վրա (88, էջ 94)։ Օգտվելով կապիտուլյացիոն իրավունքով երաշխավորված անձի արտատերիտորիալ անձնակազմի խնդիրներից, նա իր օթյակում թաքցնում էր սուլթանի լրտեսների կողմից հետապնդվող երիտթուրքերին, շահում նրանց վստահությունը։

Լոուբերը հավաստում է, որ երիտթուրքերի «ազատություն, հավասարություն և եղբայրություն» նշանաբանը միաժամանակ իտալական մասունների ղեկին էր։ Երկուսի գույներն էլ կարմիրն ու սպիտակն էին։ Սալոնիկի իտալական հյուպատոս Օսկար Շտրաուսը, թե ամերիկացի Ջակոբ Շեֆին, որ բիշ անց նշանակվեց Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան, հրեաներին Միջագետքի հողերի վրա բնակեցնելու քերականոց կողմնակիցներ էին և գործնական իրականացնողներ։

Երբ սուլթանը գահընկեց արվեց, Սալոնիկի հրեական թերթերը շնորհալից հողվածներ հրապարակեցին «Խորայիլի ճընշողի»՝ Արդուլ Համիդ II-ի դեմ, որն արհամարհել էր Հերցլի դիմումները, չէր ընդառաջել Պաղեստինում սիոնիստների իդեալների իրագործմանը (78, էջ 95)։

1909-ին Համբուրգում կայացած սիոնիստների 9-րդ համագումարը հռչակեց, որ հրեական աշխարհի բաժանումը տերիտորիալիստների և սիոնիստների՝ «թուրքական հեղափոխության հրաշքի» շնորհիվ վերացավ։ Այդ պահին էր, որ սալոնիկցի կրիստո հրեա Ջավիդ բեյը նշանակվեց ֆինանսների մինիստր, իսկ ֆրիմասոն Թալեաթ բեյը՝ ներքին գոր-

ժերի մինիստրոս Բնորոշ է, որ երիտթուրքական զինվորական զատարանների սպաների մեծամասնությունը նույնպես ֆրիմասոններ էին: Թալեաթը 1909-ի օգոստոսին դարձավ «Grand Orient de la Turquie» մասոնական օթյակի գլխավոր հովվապետը: Այս կազմակերպությունը ձգտում էր իր ազդեցությունը տարածել Նիդադատի, Սիրիայի և այլ երկրների վրա: Երիտթուրքների գլխավոր տեսաբաններից դոկտոր Նազըմը նույնպես հրեական ծագում ուներ, նա սալոնիկցի մի կրիպտո հրեայի հետ (Ֆայեթ բեյ Տուկդո) այցելել էր հրեաների ներգաղթով զբաղվող հայտնի կազմակերպության Փարիզի մասնաճյուղը՝ դեպի Միջագետք հրեաների խմբերի ներհոսքն արագացնելու խնդրով (78, էջ 99):

Երբ թուրքական պառլամենտին երիտթուրքերը հրամայեցին մամուլի մասին մի խիստ օրենք ընդունել «նոր ուժի մեջ քննադատելու համար», թերթերի տնօրեններին ու խմբագիրներին զսպաշարիկ հազցնելու համար, պրեսայուրոյի ղեկավարը նշանակվեց մի կրիպտո հրեա, որն իր ճաշակով ուղղություն էր տալիս Ն. Պոլսի մամուլին: Օսմանյան կայսրության հեռագրական գործակալության գլուխ կարգվեց մի բաղդադցի հրեա. «հասարակական անվտանգության» գլուխը՝ նույնպես սալոնիկցի մի ֆրիմասոն և այլն (73, էջ 95):

Լոուիբըրը ցավով հաղորդում էր Լոնդոն, որ 1909-ին մակեդոնական զորքի հաղթանակը իտալաշունչ ֆրիմասոնության հաղթանակն էր: Բրիտանիայի կողմից ճանաչված Նիդադատի մեծ օթյակի նկատմամբ, նա հաղորդում էր նաև, որ ներքին գործերի մինիստր դառնալով, Թալեաթը ընդլայնում էր ֆրիմասոնական կոմիտեների ցանցը կայսրությունում, այդ միջոցով իր մարդկանց կարևոր պաշտոնների նշանակելով գավառում: Դեսպանը եզրակացնում էր, որ «Գրանտ օրիններ», որի գերագույն հովվապետը Թալեաթ բեյն էր, «Թուրքիայի անտեսանելի կառավարությունն է» (78, էջ 98): Նույնիսկ ուլեմաներից ոմանք ֆրիմասոն դարձան: Այն ժամանակ դա գնահատվել էր որպես «հրեական հաշիշով ժողովրդի թունավորում» (78, էջ 99):

Այսպիսով, անգլիացի Լոուիբըրը 1910-ին եղրակացնում էր, որ երիտթուրքական այդ շրջանի գործունեությունը գե-

րազանցապես հրեական էր, «թուրքական» ի հակադրություն օսմանյան մյուս տարրերի, օրինակ, արաբների, հույների, բուլղարների, հայերի և այլոց: Նա նկատում էր, որ «թուրքը գլխավորապես զինվոր է և սահմանադրական կարգի ներքո ձգտում է պահպանել իր ցեղի գերազանցությունը, որին նա կարող է հասնել լուրջ բանակի միջոցով»: Դաշն կապելով օսմանյան և օտարերկրյա հրեաների հետ, այնուհետև շեշտում է Լոուիբըրը, երիտթուրքերը ձգտում էին մեկուսացնել մյուս ազգություններին՝ հայերին, բուլղարներին, հույներին, որոնց որպես տնտեսական հենարան ծառայեցնելու մտքից ստիպված հրաժարվել էին (78, էջ 99):

Լոուիբըրը ցույց էր տալիս, որ հրեաներն իրենց ձեռքն էին վերցրել երիտթուրքական կառավարման մեխանիզմի առանցքային կետերը: Նրանք ջանքեր գործադրեցին, որ իրենց ձեռքը վերցնեին նաև հասարակաց աշխատանքների մինիստրությունը, բայց այն հանձնվեց Հալալյան էֆենդուն զուտ ալյանապետով, որ Ադանայի կոտորածից հետո քաղաքականապես անհրաժեշտ եղավ հայի ձեռքում թողնել որևէ մինիստրական պորտֆել: Հալալյանն ամբաստանեց իր ղիբըր, երբ անդամագրվեց Թալեաթի և Զավիդի գլխավորած մասոնական օթյակին: Մինչ այդ նրան քարկոծում էր հրեաների կողմից ֆինանսավորվող «Ժյոն Թուրք» թերթը (78, էջ 100):

Լոնդոնի «Ֆորտնայթլի ռեյու» ամսագրում (1910, ապրիլ) տպագրված իր հոդվածում հրեա Իսրայել Զանգվիլը, որ իր վրա էր վերցրել ամբողջ թուրքական ազգային պարտքի վճարման ծանրությունը, հրապարակավ խոստանում էր իր մայրենի լեզուն հռչակել թուրքերին, եթե երիտթուրքերը հրեաներին անսահմանափակ ներգաղթ արտոնեին դեպի Պաղեստին:

Սալոնիկի ակտիվ սիոնիստ-երիտթուրքերի շարքերում էր Մուստաֆա Քեմալը: Նրան տվել էին եղբայր Վեդուդա Լոշ անունը: «Լոշը» միջազգային նիհիլիստական կազմակերպության մի մասն էր: Նրա մեջ շատ էին քաղաքացիությունը, ազգային դեմքը կորցրած մարդիկ, որոնք խոսում էին Ռուսաստանի հակահրեական ջարդերի կամ Վիեննայի հարուստ հրեաների մասին: Մուստաֆա Քեմալի կենսագիր Արմատրոնգը գրում է, որ Քեմալը պատկերացում չուներ հրեաների մի-

ջաղաճային նպատակներին ու հոգսերին մասին: Նա հայարտ էր, որ թուրք էր և հետաքրքրվում էր թուրքիան սուլթանի բռնակալական լծից և օտարերկրյա ճնշումից ազատագրելու խնդիրներով (66, էջ 20—21): Արմատրոնգը հավաստում է, որ հրեաները չէին վստահում նրան, և նա երբեք չդարձավ Միթոթյուն և առաջադիմություն՝ բարձր վելսախավի խմբակի անդամը: Այնուհետև նա գրում է, թե Մուստաֆա Քեմալը ղեկավար էր իթթիհադի պարագլուխների շատախոսություններից ու անգործնականությունից: Հստ Արմատրոնգի նա չէր հարգում նրանց, կոչել էր էնվերի հետ: Արմատրոնգը էնվերին համարում էր շտապող տղա, Քալեաթին, այդ փոստային պաշտոնյային անվանում էր «մեծ անճոռնի արջ», Ջեմալին՝ կուզիկ թխսամայր, խելքը կորցրած ասիացի, Ջավիդին՝ Սալոնիկի հավատափոխ հրեա և այլն (66, էջ 21):

Սիոնիստների հետ երիտթուրքերի հակահայկական համագործակցության մասին գրում է Քեհրանի համալսարանի պատմության պրոֆ. Իսմայիլ Ռահինը: Հայերի կոտորածի մեղավորներ ճանաչելով երիտթուրքերին և գերմանացիներին, թուրքական նացիոնալիզմն ու պանթուրքիզմը, պարսիկ պատմաբանն ընթերցողի ուշադրությունն է հրավիրում օսմանյան կայսրության ազդեցիկ հրեա պեմբերի բացասական դերի վրա: Նա հիշատակում է մի ֆրանսիացու «Le Dernier bal» («Վերջին բալը») գրքի 1—36 և 46—86 էջերը, որտեղ փաստեր և ապացույցներ են արձանագրված միջազգային սիոնիզմի հակահայկական գործողությունների մասին: Մասնավորապես հիշատակվում է 1914-ի հունիսի 23-ին Ստամբուլի Նուրի Օսման ակումբում կայացած իթթիհադ կուսակցության ակտիվիստների և սիոնիստների համատեղ զաղտնի յողովը: Նրան մասնակցել էր մոտ 700 մարդ, այդ թվում՝ Քալեաթը, Բադրին, Սեդը, Ֆեքրին, Խիավին և ուրիշներ: Հրեաներից աչքի ընկնող դեր էին խաղացել Սամուել էֆենդին, Արրահամ էֆենդին և ուրիշներ: Այստեղ էին նաև Ռուսաստանից հեռացած մոլի պանիսլամիստներ Ահմեդ Աղանը, Ջելալ Կորխմազովը, Մահմուդ Քադիրը, Ջիա բեյը և ուրիշներ: Ժողովն ընթացավ հակառուսական կատաղի լուղունգների հեղեղով: Հայերին մեղադրում էին ռուսասիրության մեջ: Որոշվեց բոլորտ հայտարարել ինչպես հայերին, նույնպես և

հույներին (17, էջ 42—43): Գլխավոր ճառախոսը Քալեաթն էր:

Իսմայիլ Ռահինը ցույց է տալիս, որ թուրքերի պլանն էր՝ վերացնել Հայաստանի «վտանգը» պանթուրքական աշխարհակալական ճանապարհից, Ադրեբջանի վրայով կապ հաստատել Միջին Ասիայի հետ: 1915-ի դեկտեմբերի 31-ին Վիեննա ժամանած թուրքական պատվիրակությունը, որը գլխավորում էր Ռուսաստանից հեռացած Յուսուֆ օղլի Աքչուրան, ավստրիական կառավարությանը հանձնած հուշագրում պահանջում էր Բուխարան և թուրքմենստանը ազատել ռուսական տիրապետությունից, Կիրգիզիային շնորհել քաղաքական անկախություն, Կազանի և Ղրիմի մուսուլմաններին դնել թուրքիայի հպատակության տակ, ինքնավարություն շնորհել Վոլգայի բոլոր թաթարներին: Ավստրիական կառավարությունը խոստացել էր ուսումնասիրել ու պատասխանել (17, էջ 44):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պաշտպանելով երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը, սիոնիստների պարագլուխները ձգտում էին այդ ճանապարհով իրականացնել սեփական պլանները: 1914—1916 թթ. առանձնապես ակտիվ էին դերմանական հրեաների ղեկավարները, որոնք լավատեսորեն փարվել էին կազմեր մերձավորարևելյան քաղաքականությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ցանկում բերված են միայն տվյալ հատվածում օգտագործված աղբյուրները: Պաշտպանված է բնագրի համադրակալումը:

6. Իենըտայե էդ.. Հայկական տանջանքները և նվթապան: Դասախոսություն կարդացված Բեռլինում 1902-ի հունիսի 26-ին, Ժնև, 1906:
8. Նազրեհան Գ., Արդու Համիդ Բ. Կարմիր սուլթանը, Բեյրութ, 1980:
11. ա. «Հայք», թերթ, Նյու Յորք:
13. Ղազարյան Հ., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1968:
15. ա. «Նոր դար», թերթ, Քիֆիս:
15. բ. «Նոր կյանք», թերթ, Լոնդոն:
17. Թանին Իսմայիլ, Հայերի ցեղասպանությունը օսմանյան սուլթանների օրոք (պարսկերեն), 2-րդ հրատ., Քեհրան, 1972:
42. Майский В. Германия и Ближний Восток, «Русские записки», 1916, № 1, январь, Петроград.

83 Wittlin, Alma Abdul Hamid. *The Shadow of God*. London. 1940.

Փաստաթղթի՝ հայերին վերաբերող հաստատվածների հայերեն թարգմանությունն առաջին անգամ լույս է տեսել Գեղորդ Յազըճյանի թարգմանությամբ (Չգուշացն՝ կնոճ թաթկաճանները) (Մաստաա-սիրաա-հրեա-թուրք հակահայ-լազերի ըստաաճաններն), Եր. 2002, էջ 48-71):

նի, քանի որ նրանք, ովքեր կարող են տալ անհրաժեշտ բոլոր գաղտնի տեղեկությունները մասոնների մասին՝ վախենում են մաֆիայի ձեռքն ընկնելուց: Օրինակ, օրեր առաջ, տեղացի մասոններից մեկը, որն «ի լուր աշխարհի» հայտնել էր արհեստի նշանները, նախազգուշացվել էր ռազմական դրության օրենքները խախտելու մեղադրանքով դատարանի առաջ կանգնելու սպառնալիքով:

Մի քանի տարի առաջ, սալոնիկցի հրեա-մասոն էմմանուել Կարասոն, որը հիմա Օսմանյան մեջլիսում¹ քաղաքի պատգամավորն է, Սալոնիկում հիմնեց իտալական ֆրանկմասոնության հետ կապված «Մակեդոնիա Ռիզորտա» օթյակը: Միանգամայն ակնհայտ էր, որ այս մարդը աշխատանք էր տանում երիտթուրքերի ռազմական ու քաղաքական գործիչներին մասոնությանը հաղորդակից դարձնելու համար, որպեսզի Թուրքիայի նոր ղեկավարության շրջանում տարածվի Արեւելքի հրեական գաղտնի գործունեության ազդեցությունը²: Նրանք որեւէ օտարերկրացու տանն են

¹ Օսմանյան մեջլիս.- Օսմանյան կայսրության խորհրդարանի պաշտոնական անունը: Մեջլիսը առաջին անգամ հավաքվեց 1876թ.-ին՝ Միդհատ փաշայի կողմից առաջ քաշված սահմանադրության ընդունումից հետո: Մի քանի ամիս հետո, Աբդուլ Յամիդ Բ-ը Սահմանադրությունը չեղյալ հռչակեց եւ մեջլիսը ցրեց: Մեջլիսը վերստին կյանքի կոչվեց երիտթուրքերի 1908թ. պետական հեղաշրջումից հետո:

² Այնքան մեծ են եղել հրեաների դերն ու ազդեցությունը երիտթուրքական «Իթթիհադ վեթերաքը» կազմակերպության ծննդի ու գործունեության մեջ, որ Կ. Պոլսի բրիտանական դեսպանության գլխավոր թարգման Յ. Ֆիտցմորիսը նրան անվանում է «Միություն եւ առաջադիմություն»

հավաքվում՝ իբրեւ թե ազատվելու համար արդուլհամիդյան լրտեսներից, եւ նա այնտեղ ճանաչում է նրանց իրավունքը՝ դառնալ օթյակի անդամ, արտասահմանում օգտվել դրա ընձեռած առավելություններից եւ պայքարել սուլթանի լրտեսական եղանակների դեմ:

Սակայն Աբդուլ Յամիդի լրտեսներն իմացան այդ շարժման մասին: Ակնհայտ է, որ 1908թ. հուլիսյան ապստամբությունից հետո, նրանք գաղտնիքը կորզել են Իսմայիլ Մեհիր փաշա անունով մեկից (որը հետագայում խորհրդավոր կերպով մահացավ գիշերային վթարից)³ եւ այդ մասին հայտնել Յըլդըզ պալատին⁴: Լրտեսները հանձնարարություն ստացան պարզել, թե սպաներից ու մյուսներից ովքե՞ր են օթյակի հաճախել: Ֆրանկմասոնները դրա դեմ իրենց միջոցները ձեռնարկեցին: Նրանք սկսեցին «եղբայրության» մեջ ներքաշել նաեւ գաղտնի ոստիկանությանը:

Չնայած երիտթուրքերի գործածած «Ազատություն, հավասարություն եւ եղբայրություն» բառերն ու իտալական ֆրանկմասոնների նշանախոսքերը համընկնում են⁵, միանգամայն պարզ է, որ

հրեական կոմիտե» (տե՛ս Ֆորենյն օֆիսի դիվան, Լոուբըրի թղթեր, փաստաթուղթ թիվ F. O. 800/193 B):

³ Խորհրդավոր պայմաններում սպանվեց նաեւ Կիլիկիայի 1909թ. կոտորածները հետաքննելու առաքելությամբ Կ. Պոլսի ազգային իշխանությունների կողմից Կիլիկիա ղրկված հանձնաժողովի նախագահ, Օսմանյան մեջլիսի պատգամավոր, իթթիհադական եւ մասոն Յակոբ Պապիկյանը:

⁴ Յըլդըզ պալատը սուլթան Աբդուլ Յամիդ Բ-ի նստավայրն էր:

⁵ Այդ նշանախոսքերը նաեւ ֆրանսիական մասոնության նշանախոսքերն են, որոնց Ֆրանսիայի Յանրապետության պաշտոնական նշանախոսքի

սալոնիկյան շարժման աղբյուրը հրեաներն են (երիտթուրքերի, ինչպես նաեւ իտալական ֆրանկմասոնության տարբերակող գույները կարմիրն ու սպիտակն են)⁶։ 1908-ի հեղափոխությունից քիչ անց, երբ («Միություն եւ առաջադիմություն») կոմիտեն տեղափոխվեց Ստամբուլ, հայտնի դարձավ, որ նրա ղեկավարներից շատերը ֆրանկմասոն են։ Կարասոն սկսեց երեւելի դեր խաղալ։ Մասնավորապես, նա հասավ նրան, որ իր ձեռքն անցավ («Միություն եւ առաջադիմություն»-ի) Բալկանյան կոմիտեն։

Տեղացի եւ արտասահմանցի հրեաներն սկսեցին նոր վարչակարգին արդյունավետ օգնություն ցույց տալ։ Դա շարունակվեց այնքան ժամանակ, ինչպես մի թուրք բացատրեց, քանի դեռ ժողովուրդը չսկսեց խոսել, թե ամեն մի հրեայի կարելի է գաղտնի կոմիտեի լրտես համարել եւ թե ամբողջ շարժումը ոչ այնքան թուրքական, որքան հրեական հեղափոխություն էր։ Իտալիայի կառավարությունը որպես գլխավոր հյուպատոս Սալոնիկ ուղարկեց հրեա մասոն Պրիմո Լեւիին, որը, մինչ այդ, արտաքին ներկայացուցչության փորձ չուներ։ Ամերիկայի դեսպան նշանակվեց Օսկար Շտրաուսը, որը Զեյկըբ Շիֆֆի հետ ամերիկացի հրեաների վրա մեծ ներգործություն ունեցավ հրեաների Միջագետք արտա-

են վերածվել Ֆրանսիական Մեծ հեղափոխության հաղթանակից հետո եւ այսօր էլ զարդարում են Ֆրանսիայի Հանրապետության խորհրդանիշները։

⁶ Մուստաֆա Բենալի կողմից հիմնված Թուրքիայի Հանրապետության պետական դրոշի գույներն էլ կարմիրն ու սպիտակն են. կարմիր ուղղանկյան մեջ սպիտակով պատկերվում են աստղն ու մահիկը։

գաղթի հարցում։ Դա սիոնականության զարգացած հոսանքներից էր, որը հանդես էր գալիս ուրիշ «հայրենիքի» ծրագրի դեմ⁷։

Դուք հավանաբար քաջատեղյակ եք, որ ուղղափառ մուսուլմանները մասոնության հանդեպ ուժեղ նախատրամադրվածություն ունեն։ այն համարելով անգամ ամենաանհավատությունից էլ վատ։ Կոմիտեի դեմ ելույթների ժամանակ, որոնք իրենց զագաթնակետին հասան 1909թ. ապրիլի 13-ին⁸, տվյալ գործոնը շատ մեծ դեր խաղաց։ Այդ իրադարձությունները հիմա էլ լիովին պարզաբանված չեն, բայց եւ այնպես, արդեն այն ժամանակ, մի հանգամանք ուշադրությունից չէր կարող վրիպել. չորս գումարտակ, որոնք Սալոնիկից հատուկ ուղարկված էին Ստամբուլ եւ որոնց Քյամիլ փաշան պահանջեց հետ ուղարկել 3-րդ բանակի հրամանատարություն, այդ ապստամբության (կամ, ինչպես այդ իրադարձությունները անվանում են՝ «հետադիմական գործողություններ») նախաձեռնողներն էին։ Նրանց գլուխն էր դեռնմե-հրեա եւ մասոն Ռեմզի բեյը։ Փոխանակ իրեն վստահված մասերում գործո-

⁷ Սիոնական շարժման առաջին տարիներին, խորը տարակարծություններ կային ապագա հրեական պետության վայրի շուրջ։ Սիոնականների մի մասը, Թեոդոր Հերցլի ղեկավարությամբ, պնդում էր Պաղեստինի վրա, մինչ շատ ուրիշներ չէին բացառում աշխարհի տարբեր վայրերը ԱՄՆ-ի մեկ նահանգը, Արգենտինան, Գանան, Ուգանդան եւ այլն։

⁸ Այդ օրերին Կիլիկիայի եւ Հալեպի նահանգի արեւմտյան շրջանների հայոց կոտորածը իր զագաթնակետին էր հասել։ Կոտորածներն սկսվեցին ապրիլի 1-ին ու տեւեցին մինչեւ ամսի 4-ը։ Կարգն ու կանոնը իբր վերահաստատելու համար Ռումելիայից (Թրակիա) ժամանած զորքը ինք եւս, թուրք խուժանի կողքին, մասնակցեց կոտորածների երկրորդ փուլին 12-14 ապրիլին։

ղություններ ծավալելու համար Ռեմզի բեյին ռազմական դատարան հանձնելու, նրան փաղիշահ⁹ Մեհմեդ Ե-ի (Ռեշադ)¹⁰ համհարգ կարգեցին: Կարասոն նրանցից մեկն էր, որ Աբդուլ Յամիդին ներկայացրեց [նրա] գահընկեցության մասին ուղերձը: Ծեր փաղիշահը Սալոնիկ տարվեց ու բանտարկվեց այնտեղի իտալացի հրեա բանկիրների ամրոցում: Նրան հսկելու համար Կոմիտեն նշանակեց Ռեմզի բեյի եղբայրներից մեկին: Աբդուլ Յամիդին վնասագերծելուց հետո, հրեական թերթերը «բռնակալից, Իսրայելի կեղեքչից» ազատվելու ճիշ բարձրացրին: Աբդուլ Յամիդը երկու անգամ արհամարհել է սիոնականության առաջնորդ Յերցլի դիմումը իրեն¹¹ եւ խոչընդոտել [սիոնականների] պաղեստինյան իդեալների իրականացմանը՝ մտցնելով «կարմիր անձնագրեր» (ճիշտ այնպես, ինչպես օտար քաղաքացիների մասին մեր օրերն են): Լեհաստանից եւ այլ երկրներից հրեա գաղթականների դուրս գալու դեմ: 1909թ. դեկտեմբերին Յամբուրգում կայացած 9-րդ սիոնական համագումարում, որպես «Թուրքական հեղափոխության հրաշքի» արդյունք, հրեական աշխարհում հայտարարվեց սիոնականների եւ «ուրիշ հայրենիք» ձեռք բերելու կողմնակիցների միջեւ եղած տարաձայնությունների վերացումը: Նույն օրերին, Սալոնիկի պատգամավոր, հաջողակ եւ խելոք դեռնմե-հրեա ու մասոն Ջավիդ

⁹ Փաղիշահ.- Պարսկերեն «թագավոր հայր». Օսմանյան սուլթանների բազմաթիվ տիտղոսներից մեկը:

¹⁰ Օսմանյան կայսրության սուլթան 1909թ. ապրիլից մինչեւ իր մահը 1918թ.-ին: Աչքի է ընկել է իր թուլակամությամբ եւ հարբեցողությամբ:

¹¹ Տես այս գրքույկի առաջին մասը՝ «Թեոդոր Յերցլը եւ Յայկական հարցը»:

բեյը¹² ֆինանսների նախարար նշանակվեց: Մեծ վեզիր Յիլմի փաշան դիմեց մասոնների շարքերում ընդգրկվելու խնդրանքով, բայց «ծեսերը չկատարեց»¹³:

Երկրում երկու տարի ժամկետով ռազմական դրություն հայտարարվեց: Ռազմական դատարանի շատ սպաներ ֆրանկմասոն էին: Խորհրդարանին «հրամայվեց» մամուլի մասին խիստ օրենք մտցնել: Մամուլի գրասենյակի ղեկավար առաջ քաշվեց եւս մեկ դեռնմե-հրեա մասոն Սալոնիկից: Դա շատ պատասխանատու պաշտոն էր, որովհետեւ այն զբաղեցնող անձը կարող էր որեւէ թերթ արգելել ու ռազմական դատարան կանչել խմբագրին կամ սեփականատիրոջը՝ «նոր վարչակարգը քննադատելու» մեղադրանքով: Կիսապաշտոնական Օսմանյան հեռագրային ծառայությունը, որն արտահայտում էր Կոմիտեի կարծիքը օսմանների ներքին եւ արտաքին գործերի վերաբերյալ, գործողության մեջ դրվեց բաղդադցի մի հրեայի ղեկավարությամբ: Միեւնույն ժամանակ, ոստիկանության հին նախարարության փոխարեն ստեղծվեց Յասարական անվտանգության կազմակերպությունը՝ սալոնիկցի մի հրեայի ղեկավարությամբ, որը միաժամանակ հսկում էր թե՛

¹² Ջավիդ բեյ.- Երիտթուրքերի պարագլուխներից: Գործուն մասնակցություն է ունեցել հայոց Մեծ եղեռնի ծրագրավորման եւ իրականացման մեջ: Աջակցել է Մուստաֆա Քեմալի շարժումին՝ հատկապես ֆինանսապես: Այդուհանդերձ, հիմնական դերակատարություն է ունեցել Քեմալի դեմ մի խումբ նախկին իթթիհադականների դավադրության ծրագրավորման մեջ: Հակառակ միջազգային սիոնիզմի ու մասոնության կողմից Քեմալին արված բազմաթիվ դիմումների, ճնշումների եւ նույնիսկ սպառնալիքների, նրա կողմից մահապատժի է ենթարկվել 1926թ.-ին:

¹³ Այսինքն՝ մերժվեց մասոն դառնալու նրա դիմումը:

ոստիկանությանը եւ թե ժանդարմերիային: Բացի այդ, խորհրդարանին «հրամայվեց» «Կազմակերպությունների մասին» օրենք անցկացնել, որի վրա հենվելով, «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն կարող էր արգելել իր նման բուլղարական, հունական եւ այլ կազմակերպությունների գործունեությունը՝ նրանց առաջացման դեպքում:

Այժմ հարկ է նշել եւս մեկ երեւոյթ. Սակեդոնիայի մեծ ու փոքր քաղաքներում, ինչպես նաեւ նրա մայրաքաղաքում¹⁴ մասոնական օթյակներն սկսել են «սնկի նման» աճել: Անցած տարի մայրաքաղաքում հիմնվել է 12 օթյակ:

Ոչ մեկ հարցաքննություն կամ հետաքննություն պետք չէ՝ հասկանալու համար, որ մասոնական գործունեության գաղտնիության պահպանումը միջոց է թաքցնելու համար Կոմիտեի իսկությունը, թեւեւ նա մինչ այդ հայտարարել է, որ գաղտնի կազմակերպություն չէ: Ակնհայտ է, որ ընդհատակյա քարոզչություն է տարվում, թե բազմաթիվ բարձրաստիճան ծառայողների եւ այլ անձնավորությունների դիրքն ու առաջխաղացումը կախված են նրանց «եղբայրներ» լինելուց: Խոսակցություններ եղան, թե մասոնության շնորհիվ Թուրքիայի օգտին են լուծվելու եզիպտական¹⁵, կրեոտե-

¹⁴ Նամակագիրը նկատի ունի Սալոնիկ քաղաքը:

¹⁵ Խոսքը եզիպտոսը 1882թ.-ից սկսած բրիտանական փաստացի գրավումից վերստին Օսմանյան ամբողջական գերիշխանության վերադարձնելու մասին է:

յան¹⁶ եւ մյուս հարցերը, թե մասոնների առաջ բացվելու են քաղաքական աշխարհի կարեւորագույն գաղտնիքները, թե մասոնները դառնալու են Անգլիայի ծեր թագավորի¹⁷ եղբայրները, ում հետ կհանդիպեն եւ ձեռք կսեղմեն նրա Ստամբուլ այցի ժամանակ: Նոր անդամներից շատերն սկսեցին հաճախել ավելի վաղ ստեղծված «Լա Թուրքի»¹⁸ անգլիական օթյակը: Ոմանց հաջողվեց մտնել նրա մեջ, թեւեւ շատ ջանքեր թափվեցին դրա համար... Ասում են, թե որոշ նոր օթյակներ, ինչպես Եզիպտոսի օթյակները, իրենց ծիսակատարությունները հին շոտլանդական ծեսով են անցկացնում: Խոսակցություններ տարածելով, թե իբր իրենց մոտ կան Անգլիայի թագավորի «պահպանվող վկայագրերը», որոնք ձեռք են բերվել Շոտլանդիայի Մեծ օթյակի միջոցով, ձգտում են օգտագործել այն վստահությունը, որը տածում են օսմանյան հասարակության բոլոր խավերը Անգլիայի նկատմամբ: Բանակում Կոմիտեի ազդեցությու-

¹⁶ Հունաբնակ, բայց Օսմանյան գերիշխանության տակ մնացած Կրետե կղզու բնակչությունը 1897թ.-ին ապստամբեց Օսմանյան տիրապետության դեմ, ինչն առաջնորդեց Հույն-թուրքական պատերազմի: Մեծ պետությունների ջանքերի շնորհիվ խաղաղությունը վերահաստատվեց կղզուն Լիբանանի նման ինքնավարության շնորհումով, թեւեւ դա չլուծեց Կրետեի խնդիրը: 1912-13թթ. Բալկանյան պատերազմներից հետո կնքված Լոնդոնի 1913թ. համաձայնագրով՝ կղզին փոխանցվեց Հունաստանի: Կղզու այդ կարգավիճակն ամրագրվեց Առաջին աշխարհամարտից հետո կնքված համաձայնագրերով (մասնավորաբար 1923թ. Լոզանի դաշնագրով):

¹⁷ Խոսքը Մեծ Բրիտանիայի թագավոր եւ Հնդկաստանի կայսր, մասոն Էդուարդ Զ-ի մասոնական անդամության վկայագրերի մասին է:

¹⁸ Լա Թուրքի.- Ֆրանսերեն՝ Թուրքիա:

նը տարածելու համար, սպաներին ընդունում են մասոնության մեջ՝ նրանց «Ռենգե» օթյակի անդամ դարձնելով: Կոմիտեի պատգամավորների եւ ծերակուտականների¹⁹ մեծամասնությունը մասոն է դարձել եւ ընդունվել «Սահմանադրություն» («Լա Կոնստիտուսիոն» կամ «Կանունի էսասի») օթյակի մեջ: Նրանց առաջիններից էին ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը²⁰ եւ ֆինանսների նախարար Զավիդ բեյը: Ընդդիմության պատգամավորներից մի քանիսը, հատկապես արաբները, տեսնելով, որ մի կողմ են մնում քաղաքական գաղտնիքներից եւ վարչական ղեկից, նույնպես սկսեցին միանալ օթյակներին կամ նորերը ստեղծել, ինչպես, օրինակ, «Օսմանյան եղբայրություն» («Ուխուվվետի օսմանիե») եւ «Ազատության բարեկամներ» («Մուհիբանի հյուրրիբե»):

Վերոհիշյալ օթյակների որպես լրացում, 1909-1910թթ. ստեղծվեցին հետեւյալ օթյակները. «Արեւելքի հավատարմություն»²¹,

¹⁹ Օսմանյան մեջլիսը բաղկացած էր երկու պալատներից՝ ստորին (ներկայացուցիչների կամ պատգամավորների, որոնց ժողովուրդն էր ընտրում) պալատ կամ «Մեջլիս մեբուսան» եւ վերին (երեւելիների կամ ծերակուտականների, որոնց նշանակում էր սուլթանը) պալատ կամ «Մեջլիս այան»:

²⁰ Մեհմեդ Թալեաթ.- երիտթուրք գլխավոր ղեկավարներից, Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար, 1916-1918թթ.-ին Մեծ վեզիր (վարչապետ): Մեծ եղեռնի հիմնական ծրագրավորողներից ու իրականացնողներից: Սպանվեց 1921թ. մարտի 21-ին, Բեռլինում, վրիժառու Սողոմոն Թեհլիրյանի արձակած փամփուշտով:

²¹ «Արեւելք» (եվրոպական մի շարք լեզուներով՝ Orient) բառը մասոնների շատ հաճախ օգտագործած բառերից է եւ մասոնական բառացանկում խորհրդավոր իմաստներ ունի: Պետությունների մասոնական գլխավոր

«Անկեղծ բարեկամներ», «Միություն եւ պաշտպանություն», «Բիզանցիո Ռիզորտո», «Լա Վերիտե»²², «Լա Պատրի»²², «Լա Ռոնեսսանս»²³ եւ, եզիպտոսի ընդհատակյա քաղաքական ինտելեկտների համար բավական հայտնի «Լուսաբաց»²⁴, որը «Մակեդոնիա Ռիզորտայի» մի բաժինն է: Այս ամբողջ մասոնական ցանցը, սալոնիկյանի ու մակեդոնականի նման, իրեաների ձեռքում է գտնվում, որոնք կամ անմիջականորեն են ղեկավարում բոլոր օթյակները, կամ ուղղորդում են դրանց գործունեությունը: Հայերը, հույները եւ տեղացի մյուս քրիստոնյա տարրերը ներկայացված չեն, եթե չասենք, որ նրանք ընդհանրապես այդ գործունեությունից դուրս են²⁵: Վերելում եւ արդեն նշել են եզիպտացի իշխան Սաիդ

օթյակները իրենց անվան վերջին կողմ են «Արեւելք» բաղադրիչը: «Արեւելքը» մասոնների մոտ չունի աշխարհագրական նշանակություն:

²² Լա Վերիտե.- Ֆրանսերեն ճշմարտություն:

²² Լա Պատրի.- Ֆրանսերեն հայրենիք:

²³ Լա Ռոնեսսանս.- Ֆրանսերեն վերածնունդ:

²⁴ «Լուսաբաց».- Արաբերեն եւ թուրքերեն «Շաֆակ», որը եզիպտոսի մասոն վերնախավի հիմնական օթյակն էր: «Շաֆակին» անդամ էին նաեւ եզիպտահայ քաղաքական եւ տնտեսական երեւելի բազմաթիվ գործիչներ:

²⁵ Բրիտանացի դիվանագետի այս հաստատումը ճիշտ չէ: Հայազգի մարդիկ (իթիհադական իշխանության տարիներին Հանրային աշխատանքների եւ Արտաքին գործերի նախարարներ Պետրոս Հալաջյանը եւ Գարիբե Նորատունկյանը, Օսմանյան մեջլիսի պատգամավորներ Հակոբ Պապիկյանը եւ Գրիգոր Զոհրապը ու շատ ուրիշներ) բավական գործունե ընդգրկվել էին Օսմանյան մասոնական օթյակներում: Այսուհանդերձ, դա թուրք-դեռման հրեա իթիհադական «եղբայրների» չխանգարեց, որ պատեհ առիթին ֆիզիկապես վերացնեն նրանց մեծ մասին:

Հալիմի²⁶ մասին: Նա, իր եղբայր Աբբաս Հալիմը, իշխան Ազիզ Հասանը²⁷ եւ այլ եզիպտացիներ, ատելություն զգալով Նորին գերագանցություն խղիվի²⁸ նկատմամբ, ֆինանսական աջակցություն ցուցաբերեցին «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեին եւ անձնական մասնակցություն ունեցան նրա աշխատանքներին: Եզիպտական մասոնության կապը երիտասարդ թուրք մասոնության՝ Սալոնիկից մայրաքաղաք տեղափոխվելու գործընթացի հետ՝ այդքան էլ պարզ չէ, սակայն ակնհայտ է, որ դա քաղաքականության մեջ Վոսփորի ավերում նախօրոք հայտնված որոշ հոսանքների արդյունքն է: Մասոնության կատաղի հակառակորդ, այն գաղտնի կազմակերպություն համարող եւ մասոնների ղեկավարած մակեդոնական ուժերը մայրաքաղաք մտցնելու մեջ վրտանգ տեսնող Աբդուլ Համիդին տապալելուց որոշ ժամանակ անց՝ տարբեր հանդիպումներ ու բանակցություններ սկսվեցին: Անհրաժեշտ լիազորությունները ստացվել էին իտալական «Մեծ Արեւելք» («Գրան Օրիան») օթյակից, եւ իշխան Հասանը, Յուսուֆ Սակալիկի բեյի օգնությամբ բելգիական մասոնության Գերագույն խորհրդից ստացած հատուկ լիազորությունների շնորհիվ, 33 աստի-

²⁶ Եզիպտոսի ալբանական ծագումով խղիվական իշխանության տոհմից: Օսմանյան կայսրության Մեծ վեզիր 1913-1916 թվականներին: Մեծ եղեռնը ծրագրավորողներից: Սպանվել է Հռոմում, 1921թ. դեկտեմբերի 6-ին, հայ վրիժառու Արշավիր Շիրակյանի ձեռքով:

²⁷ Ազիզ Հասան.- Առաջին աշխարհամարտից հետո՝ Եզիպտոսի սուլթան 1920-1922 թթ.-ին:

²⁸ Խղիվ.- Եզիպտոսի օսմանյան անվանական իշխանության փոխարքակառավարիչ՝ ժառանգական իրավունքներով: Նամակի գրության տարիներին, Եզիպտոսի խղիվն էր Աբբաս Հալիմը (Աբբաս Բ-ը):

ճան²⁹ ստացավ եւ պարտավորություն վերցրեց Թուրքիայում «Մեծ Արեւելք» ստեղծել: Դա 1909թ. հուլիսին կամ օգոստոսին էր: Հենց այդ ժամանակ էլ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը Մեծ Վարպետ³⁰ դարձավ... Այսպիսով, պարզվում է հետեւյալը. 1909թ. ապրիլին Աբդուլ Համիդի նկատմամբ մակեդոնական ուժերի հաղթանակը թվում է իտալական ֆրանկմասոնության հաղթանակ անգլիացիների կողմից ճանաչված «Եզիպտոսի Մեծ օթյակի» դեմ...

Ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը (նա գնչուական ծագում ունի) եւ ֆինանսների նախարար Ջավիդը (դեոնմե-իրեա) կոմիտեի գաղտնի ուժերի պաշտոնական ներկայացուցիչներն են: Նրանք նախարարների խորհրդի միակ [մասոն] անդամներն են եւ ֆրանկմասոնության գազաթնակետերը Թուրքիայում: Այն բանից հետո, երբ Թալեաթ բեյը ներքին գործերի նախարար դարձավ մոտ մեկ տարի առաջ, պատասխանատու պաշտոնների սկսեցին նշանակվել միայն մասոններ կամ կոմիտեի հետ կապված մարդիկ,

²⁹ Մասոնական նվիրապետությունը (հիերարխիա) բաղկացած է 99 աստիճանից, որոնցից 34-99-րդ աստիճանները գերգաղտնի են ու բացառապես հրեաների մենաշնորհը: Մասոնական «սովորական» օթյակում բարձրագույն աստիճանը 33-րդն է, որն ունեցողը կոչվում է Մեծ Վարպետ, Գերհարգելի Վարպետ կամ Մեծ Մագիստրոս:

³⁰ Մեծ Վարպետը «սովորական» (33 աստիճան կարգասանողակով) մասոնական օթյակներում բարձրագույն պաշտոնն է: Միայն 33 աստիճան ունեցող մասոններին է թույլատրվում օթյակի Մեծ Վարպետ «ընտրվել»: Մեծ Վարպետն է նախագահում եւ վարում օթյակի նիստերն ու գործունեությունը:

իսկ, ամենից հաճախ, այս երկու որակները իրենց մեջ համատեղող դեմքեր: Այսպիսով, մասոնական կոմիտեի ցանցը տարածվեց ողջ կայսրությունով: Դրա նպատակը հետեւյալն է. եթե պատահականորեն կամ արտակարգ իրադրության ծանր ճնշման որպես հակադարձություն այսօրվա մեջլիսի մեծամասնությունը այնպիսի ընդդիմադիր դիրք գրավի, որ վտանգ սպառնա թալեաթի եւ Զավիդի նախարարական պաշտոններին, այդ մարդիկ դրությունն անմիջապես կփոխեն պետական հեղաշրջման միջոցով, կլուծարեն մեջլիսը, որից հետո տեղերում ընտրություններ կանցկացնեն եւ մասոնական օթյակների ու կոմիտեական ակումբների օգնությամբ ավելի ձեռնտու պատգամավորներ կընտրվեն: Այսպիսով, Թուրքիայի քողածածկված կառավարությունը «Մեծ Արեւելքն» է՝ Մեծ վարպետ Թալեաթ բեյի գլխավորությամբ:

Վերոհիշյալ բոլորից, ինչպես եւ երիտթուրքերի շարժման այսօրվա դրության ամեն այլ դիտարկումից ակնհայտ է դառնում, որ Օսմանյան կայսրության մյուս հիմնական տարրերի (արաբներ, հույներ, հայեր, բուլղարներ) իբրեւ հակակշիռ՝ հրեաներն այստեղ հանդես են գալիս որպես «թուրքեր»: Թուրքերը հիմնականում մարտիկ են, զինվոր: Նրանք ձգտում են իրենց ռասայական գերակայությունը ամրապնդել ինչ-որ սահմանադրական ձեւերով, իսկ դա հնարավոր է անել միայն հրեական խողովակներով: Բանակը, որի մեջ ներդրվում է [կայսրության] ամբողջ եկամտի կեսը, օգտագործվում է մյուս խմբավորումները ահաբեկության մեջ պահելու եւ ընդդիմադիր ելույթները ճնշելու համար: Մի կողմից, Սահմանադրությունը նախատեսում է ինչ-որ տնտեսական զարգացում, սակայն, Թուրքիայի տնտեսության կառույցը ամենաթույլերից է, եւ, առանց օժանդակության, նույնիսկ մեկ շաբաթ չի գոյատևի: Սկզ-

բում ենթադրվում էր, որ տնտեսության օժանդակության պարտականությունը պիտի կատարեն հայերը, բուլղարները, հույներն ու օսմանցի հրեաները: Սակայն, երիտթուրքերը կապ հաստատեցին միայն օսմանցի եւ արտասահմանցի հրեաների հետ: Նրանց օտարումը մյուս ժողովուրդներից՝ ակնհայտ դարձավ: Հունգարները, որոնք նույնպես թուրքական ժողովուրդ են³¹ եւ որոնք եւս գործարար որակներ չունեն, նույնպես ընկան հրեաների տնտեսական ու ֆինանսական տիրապետության տակ: Մենք արդեն ապացույցներ ունենք, որ Հունգարիա այդպիսի վախճան ունեցավ: Երեւում է, որ հրեան, իր տնտեսական բարձր գիտակցությամբ, թուրքին ծուղակը զցեց: Քանի որ Իսրայելի սուրբ հողերը գտնվում են թուրքական սահմանների ներսում, բնական է հրեաների ձգտումը՝ նշանակալից դիրք գրավել, որպեսզի դրա օգնությամբ իրականացնեն իրենց իղեալները՝ ստեղծել իսրայելական անկախ պետություն: Պաղեստինում կամ Բաբելոնում: Եթե հրեաները հասնեն իրենց նպատակներին, որոնց ձգտել են երկար տարիներ, ու եթե նրանց նաեւ հաջողվի թուրքերից ստանալ հրեաների Թուրքիա ազատ մուտքի թույլտվություն, ապա նրանք Միջագետքում կվերաբնակեցնեն իրենց մի քանի միլիոն հավատակիցներին, որոնք Ռուսաստանում եւ Ռումինիայում փակուղում են հայտնվել: Հրեաների «բռնի խնա-

³¹ Բրիտանացի դիվանագետը ճիշտ չէ: Հունգար ազգի հիմնական կորիզը կազմող մաջարները, ինչպես նաեւ թուրքերը, չինացիները, ճապոնացիները եւ այլ ազգեր, պատկանում են դեղին ռասային: Մաջարները պատկանում են դեղին ռասայի ուգրո-ֆիննական լեզվաընտանիքի ժողովուրդներին, որոնք շատ հեռավոր աղերսներ ունեն ժամանակակից թուրքերի հետ:

մակալության» կարծեք որպես պատասխան, նրանք երիտթուրքերին առաջարկեցին զոհել իրենց լեզուն, խոսել թուրքերեն եւ նույնիսկ խոստացան ամբողջովին վճարել Օսմանյան կայսրության պետական բոլոր պարտքերը:

Այն բանից հետո, երբ Սալոնիկի կոմիտեի ազդեցիկ գործիչներից մեկը՝ դոկտոր Նազըմը (ասում են, թե նա հրեական ծագում ունի)³² սալոնիկցի դեռնմե-հրեա Ֆաիկ Տուլերոյ բեյի հետ այցելեց կազմակերպության Փարիզի մասնաճյուղը՝ հրեական գաղութ ստեղծելու հարցով, բացահայտորեն ծրագրեցին 200 հազար հրեաների Սակեդոնիայում եւ մի քանի միլիոն ռուսական հրեաների Միջագետքում վերաբնակեցումը: Այդ թեման շոշափելով, Իսրայել Չանգվիլը «Ֆորտնայթ ռեվյու»-ում հուլյս հայտնեց, որ Մեծ վեզիր Յակը փաշան այն մարդն է լինելու, որը կկարողանա Միջագետքում հրեական անկախ պետության ստեղծման հարցը արդյունավետ կերպով դնել Բարձրագույն դրան³³ առաջ: Յակը փաշայի անձնական քարտուղարը մի հրեա նշանակվեց: Ինքը՝ Յակը փաշան, հաճախ այցելում է հրեաների տները, սակայն հրեաների ծրագիրները մինչեւ հիմա չեն իրականացվել: Կասկած չկա, որ երիտթուրքերը, ռազմական խոշոր ծախսերի պատճառով մեծ պարտքերի մեջ խրվելու անհրաժեշտության առաջ հայտնվելով, կհայտնվեն իրենց հրեա պարտատերերի ուժեղ ճնշման տակ:

³² Մեծ եղեռնի հիմնական ծրագրավորողներից ու իրագործողներից մեկը: Ղեկավարել է դա իրագործելու կոչված «Թեշքիլթը մախսուսե» («Հատուկ կազմավորումներ») կառույցը:

³³ Բարձրագույն դուռ (թուրքերեն՝ Բաբը ալի).- Օսմանյան կայսրության կառավարության նստավայրի անունը:

Սուլթան Աբդուլ Համիդը, երբ ինք եւս մի ժամանակ գտնվել էր ֆինանսական շատ ծանր դրության մեջ, մերժել էր սիոնական առաջնորդ Յերցլի³⁴ կողմից եղած նմանատիպ աջակցության առաջարկությունը: Նույն միտքը կրկնում է Չանգվիլը, երբ գրում է. «Քանի դեռ երիտթուրքերը ավելի քիչ առողջ միտք ունեն, քան փող, պետք է նրանց հասկացնել, որ նրանց կայսրության համար մեծ առավելություն կլինի գործարար եւ անազանունակ սպիտակամաշկ բնակչության ազատ ներգաղթը...»

Սիոնական «Լ'Օրոր»³⁵ թերթը, որը մեկ տարի առաջ սկսեց լույս տեսնել Ստամբուլում, իր ընթերցողներին անդադար հիշեց-

³⁴ Թեոդոր Յերցլ.- Ավստրիացի հրեա, մասնագիտությամբ լրագրող: Հեղինակել է «Հրեական պետություն» անունով սիոնիզմի գաղափարախոսության անկյունաքարային աշխատությունը: Նախաձեռնել է սիոնական շարժումը, որի վերջնական նպատակն էր Իսրայել հրեական պետության ստեղծումը Պաղեստինում: 1897թ.-ին, Շվեյցարիայի Բազել քաղաքում, Յերցլի ղեկավարությամբ, գումարվեց սիոնական 1-ին համագումարը, որը որոշեց ստեղծել հրեական պետություն: Սակայն պատգամավորները տարակարծություններ ունեցան այդ պետության վայրի շուրջ: Թ. Յերցլը բանակցություններ է վարել Աբդուլ Համիդ Բ-ի եւ Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության ղեկավար Ավետիս Նազարբեգի հետ, երկու դեպքում էլ խոստանալով «լուծել» Հայկական հարցը հոգուտ բանակցության մյուս կողմի՝ սիոնական ծրագրերին նրանց աջակցության դիմաց: Երկու կողմերից էլ նա կտրուկ մերժումի է արժանացել (տես այս գրքույկի առաջին մասը):

³⁵ Ֆրանսերեն «Օրոր», ռուսերեն «Ավորոա» ու համահունչ բառերը եւրոպական բազմաթիվ լեզուներում նշանակում են «լուսաբաց»: Հիշենք, որ այս անունն էր կրում Եգիպտոսի մասոնական վերնախավի օթյակը:

նում է, որ հրեաների գերիշխանությունը եզրափակվում է, այն երկրում, որտեղ փարավոնները հրեաներին բռնությամբ ստիպեցին բուրգերը կառուցել, - կազմում է մի մասը միայն այն ժառանգության, որին ապագայում պետք է տիրի Իսրայելը: Բայց, ամեն դեպքում, հրեաների վերջնական նպատակներն են մնում Միջագետքն ու Պաղեստինը: Այս տեսությունը, իսկապես, հույժ անհավանական է թվում, բայց ակնհայտ է, որ այն պաշտպանվում է տարածվում է մի քանի իդեալիստների կողմից: Առաջին նպատակը, որին նրանք ձգտում են հասնել, Թուրքիան է այդ երկրի բոլոր փողային ներդրումները ամբողջությամբ իրենց ձեռքի տակ վերցնելն է: Ինչպես նախապես արդեն ասվել է, արտոնություններ տրամադրելու իրավունք ունեցող Հանրային աշխատանքների նախարարությունը գտնվում է մի հայի՝ [Պետրոս] Հալաջյանի ձեռքում: Իսկ երիտթուրքերի կառավարական մեխանիզմի կարելուագույն կետերը կամ գրավել են հրեաները, կամ գտնվում են նրանց հսկողության ներքե: Երբ Հալաջյան էֆենդիի նույնպես հայ նախորդին հեռացրին այդ պաշտոնից, ամենավճռական քայլեր արվեցին, որ նրա տեղը ղենեն մի հրեա կամ մի թեկնածու, որին հրեաները թիկունք կանգնեն: Սակայն հայերը, հատկապես Ադանայի կոտորածից հետո, ծայրագույն անհրաժեշտություն են զգում ամեն գնով իրենց ձեռքում պահելու գոնե մեկ հանգուցային կետ նախարարների խորհրդում: Երկու ամիս առաջ թվում էր, որ Հալաջյանը ուր որ է ընկնելու է, չի կարողանալու դիմակայել: Սակայն, նա ապրելու նոր հնարավորություններ գտավ մասոն դառնալով, մտնելով այն օթյակը, որի մեջ է Թալեաթ բեյը: Ստույգ է, որ նրա դրությունը նորից անկայուն է: Ասում են, որ նրա տեղը պետք է զբաղեցնի մեկը, որը կամ հրեա, կամ էլ թիկունքում հրեա

ունեցող թուրք է լինելու: Պարզ է, որ հրեաների համար կենսականորեն անհրաժեշտ է պահպանել իրենց բացարձակ տիրապետությունը երիտթուրքական խորհուրդներում. նույնպես կարելու է պահպանել հակասությունների բոցը թուրքերի եւ հրեաների հակառակորդների՝ հայերի եւ հույների միջև:

Примечание: Оба документа подтверждают из первых рук участие деятелей масонства в младотурецкой 1908-1909 гг. революции, а также разногласия между ними по процедурным вопросам, что вызвало неоднозначную реакцию иностранных инстанций ордена. Талаат Паша являлся одним из лидеров младотурок, министром внутренних дел, затем членом правящего триумvirата. Фехми Ниязи — руководитель восстания в Македонии против власти султана Абдул Гаида. Среди масонского руководства видные места занимали итальянцы, французы, евреи.

Առթին Խորշուղյանի ներկայացվող հոդվածը, որը բացահայտում է XX դարի առաջին տասնամյակների պատմության որոշ մութ էջեր, լույս է տեսել Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի հրատարակած «Հայոց ցեղասպանությունը. Ռուսմասիկայություններ» ժողովածուի էջերում (Երևան, 2001, էջ 168-185):

Ռ. Լ. ԽՈՐՇՈՒՂՅԱՆ



ԵՂԵՌՆԸ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԶՄԸ

Հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը. որի հետևանքով երիտ-բուրքերը ոչնչացրին ավելի քան մեկուկես միլիոն մարդ. խորապես ակեկոծեց համաշխարհային հասարակական կարծիքը: Տարբեր ազգությունների, դավանանքների, սոցիալ-քաղաքական հայացքների, դասակարգերի և խավերի մարդիկ, իրենց պատվի և խղճի թելադրանքով, դատապարտում էին այդ եղեռնագործությունը:

Այդ համապատկերի վրա խիստ աններդաշնակ էր բուլշևիկների և հատկապես նրանց առաջնորդ Վ. Ի. Լենինի լուրջությունը: Լոռում էր մի մարդ, որը 70 տարի շարունակ հրանցվում էր որպես բարձրագույն անհատականություն, «մեր դարաշրջանի մտքի, խղճի ու պատվի» բուն էություն, հայ ժողովրդի «մեծ բարեկամ»: Մարդ, որը գրել է աշխարհում տեղի ունեցող ամեն ինչի մասին, չարձագանքեց մի ամբողջ ժողովրդի արյունալի ցեղասպանությանը: Չնկատե՞ց, թե՞ չցանկացավ նկատել:

Պատասխանի որոնումները մասնագետին տանում են դեպի մեկ այլ խորհրդավոր անձնավորություն՝ Ալեքսանդր Պարվուս: Նրա կենսագրական տեղեկանքը ներկայացված է ռուս մեծ գրող Ալեքսանդր Սոլժենիցինի «Լենինը Ցյուրիխում» գրքում. «Պարվուս (Գեկֆանդ) Ալեքսանդր (Իգորայի) Լազարևիչ (1867-1924): Ծննդով Միոսկի մահաճգից է (Բերեզինո), մանկությունն անցկացրել է Օդեսայում: 1885 թվականին ավարտել է Օդեսայի գիմնազիան, 1891 թվականին՝ Բազելի համալսարանը: Սկսել է հաջողությամբ տպագրվել ծախ գերմանական մամուլում («Հրապարակախոսական հեղափոխություն»), գերմանական սոցիալ-դեմոկրատներին կապում էր ռուսների (Պլեխանով, Պոտրեպով) հետ: Կազմակերպել է «Իսկրայի» տպագրումը Լայպցիգում և ինքն էլ

տպագրվել է այնտեղ: Իր հրապարակախոսության համար վտարվել է գերմանական տարբեր երկրամասերից, տեղափոխվել այլ երկրամասեր: Պետերբուրգի 1905 թ. Խորհրդի փաստացի ղեկավարը մի քանի ամիս բանտարկվել է Կրեստիում և Պետրոպավլովյան ամրոցում. վարչական կարգով երեք տարով արտաքսվել է Պետերբուրգից, մեկնել արտասահման: Խիստ քննադատել է գերմանական քաղաքականության «ռուսական կուրսը» (մերձեցումը), որը նկատվում էր 1907 թվականից, 1910-1915 թթ. եղել է Թուրքիայում և Բուլղարիայում, հարստացել, եղել է Թուրքիայի և Բուլղարիայի կառավարություններին առընթեր ֆինանսական խորհրդական՝ նրանց համաշխարհային պատերազմ մտնելու ժամանակ: 1915 թվականի փետրվարից բանակցություններ է վարել գերմանական արտգործնախարարության հետ: Նախաձեռնել և մասնակցել է ռուսական հեղափոխության նախապատրաստման և Ռուսաստանը պատերազմից դուրս բերելու գործընթացին: Առևտրի բողի տակ գերմանական դրամ է ուղարկել ռուս հեղափոխականներին, Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ բացառապես բոլշևիկներին. նրանց հնարավորություն տալով արագորեն ամրապնդել իրենց մամուլն ու կազմակերպությունը, որը շատ թույլ ու սակավաթիվ էր մինչև 1917 թվականի փետրվարը՝

1 А. Солженицын, *Ленин в Цюрихе, Париж, 1975*, с. 234-235.

Այս նկարագրի հետ մեկտեղ Սապահ-Գյուլանը հայտնում է մի կարևոր տեղեկություն ևս: Պարվուսը Սապահի հետ հանդիպելիս առաջարկել էր ապագայնացնել երկու հայ հեղափոխական կուսակցությունները՝ Հնչակն ու Դաշնակցությունը, ձուլելով նրանց մի զուտ սոցիալիստական կուսակցության մեջ. և այն էլ՝ մի երկրում. որտեղ նույնիսկ պրոլետարիատ չկար: Ու՞մ էր ձեռնառու ցեղասպանության շեմին Թուրքիայում հայ ազգային կուսակցությունների վերացումը: Նման սադրիչ առաջարկի հեղինակի մասին Սապահ-Գյուլանը ավելացնում է. «Պարվուսը մեծ ծառայություն էր. որ մատուցանում էր Իբրիհատին»!:

1 Նույն տեղում, էջ 298:

2 Н. Н. Берберова. Железная женщина, М., 1991, с. 173

Պարվուսին տրված այս բնութագրերը ամփոփում է ռուս դիվանագետ Անդրեյ Մանդելշտամը՝ «պարզապես գերմանո-թուրք փրփուրքաթոր ազենք»¹:

Իսկ ի՞նչ առնչություն ունեն գերմանա-թուրքական գործակալը Լենինի հետ:

1915 թվականի մայիսին Պարվուսը հատկապես Լենինի հետ հանդիպելու համար ժամանեց Բեռն. «Մեկնելով Շվեյցարիա, գրում է Սոլժենիցինը, Պարվուսն ամենից ավելի կանխավայելում էր Լենինի հետ հանդիպումից ունենալիք հաջողությունը: Վաղուց էր հնացել նրանց մյուսխենյան ծանոթությունը, նրանք տարիներով չէին տեսնվել, բայց Պարվուսի աչալուրջ հայացքը երբեք տեսադաշտից բաց չէր թողնում Եվրոպայի այդ միակ անկրկնելի սոցիալիստին, որը միանգամայն անաչառ էր, զերծ նախապաշարմունքներից, մաքրամտությունից, գործի ցանկացած շրջադարձում պատրաստ էր ընդունել հաջողություն բերող հարկավոր մեթոդը, միակ դաժան իրատեսին, որը երբեք չէր հրապուրվում պատրանքներով, սոցիալիզմի երկրորդ իրատեսին՝ Պարվուսից հետո»²:

Լենինին Պարվուսը բացահայտում էր իր նպատակները. «Ես կազմել եմ միակ մեծ պլանը: Ես այն ներկայացրել եմ գերմանական կառավարությանը: Եվ այդ պլանի համար, եթե ուզում եք իմանալ, ես կատանամ քսան միլիոն: Բայց գլխավոր տեղն այդ պլանում ես հատկացրել եմ Ձեզ»³:

Ըստ նրա, ամենից առաջ հարկավոր էր. «Միասնական ղեկավարության տակ հավաքել բոլոր ուժերն ու բոլոր միջոցները, միասնական շտաբից ղեկավարել կենտրոնական տերությունների, ռուս հեղափոխականների և ծայրամասերի ժողովուրդների գործողությունները...: Պլանը համառոտեմ պնդում էր, թե գերմանական ոչ մի հաղթանակ վերջնական չէ, առանց Ռուսաստանում տեղի ունենալիք հեղափոխության. չմասնատված Ռուսաստանը կմնա որպես մշտական անմար սպառնալիք: Բայց նաև ոչ մի առանձին ուժ չի կարող ավերել ռուսական ամրոցը, այլ միայն միասնաբար նպատակամղված նրանց դաշինքը. սոցիալիստական հեղափոխության և ազգային հեղափոխության համատեղ պայքարում Գերմանիայի դրամական և նյութական օժանդակության պայմաններում»⁴:

1 Տե՛ս Սալահ-Դյուլան, Պարվուսի նամակները, էջ 295:

2 А. Солженицин, Ленин в Цюрихе, с. 120.

3 Նույն տեղում, էջ 111:

4 А. Солженицин, Ленин в Цюрихе, с. 114-115.

Այդ պայթյունն, ըստ Պարվուսի, լինելու էր հետևյալ սցենարով. «Գլխավոր լծակը ուկրաինական շարժումն է, առանց ուկրաինական նեցուկի՝ ռուսական շենքը կփլվի: Ուկրաինական շարժումը կփոխանցվի այնուհետև Կուրանի կազակներին, գուցե տատանվեն նաև Դոնի կազակները: Բնական է՝ համագործակցությունը նաև առավել հասուն, գրեթե արդեն ազատ ֆինների հետ: Նրանց հեշտ է զենք ուղարկելը, իսկ նրանց միջոցով՝ Ռուսաստան: Լեհաստանը միշտ հինգ ռուպե հետո պատրաստ է հակառուսական ապստամբության և միայն սպասում է ազդանշանի: Ապստամբած Լեհաստանի և Ֆինլանդիայի միջև կալեկոծվի նաև Մերձբալթյան երկրամասը (մի այլ տարբերակով Պարվուսը նախատեսում էր, որ Օստլեյան նահանգները հաճույքով կմիանան Գերմանիային)...: Կովկասը կտրտված է և նրան դժվար կլինի գրգռել, բայց Թուրքիայի մուսուլմանական ազիտացիայի միջոցով նրան կհամենք դազավաթի՝ սրբազան պատերազմի»¹:

Թուրքիայում Պարվուսի գործունեության վերաբերյալ Սոլժենիցինը տալիս է հատուկ պարզաբանում. «Բարձրանալով երիտթուրքերի օրոք, իր ֆինանսական հանճարը ռուսական ծառի բունը կտրող կացնից վերածելով թուրքականը սնող այգեպանի բահի... Պարվուսը դեսուդեն էր նետվում իր զաղտնի քայլերով, համոզելով կառավարողներին, որ միայն Գերմանիայի կողմում Թուրքիան կազատվի իր անվերջ կապիտուլացիաներից, նա շտապում էր սարքավորում և պահեստամասեր հասցնել թուրքական երկաթուղիների և ջրաղացների համար, ցորեն մատակարարել թուրքական քաղաքներին, որպեսզի Թուրքիան աշնանը ոչ թե պարզապես պատերազմ հայտարարի, այլև հնարավորին չափ արագ իրական պատերազմական գործողություններ սկսի Կովկասում»²:

Պատմական դեպքերի հետազոտությունը ցույց է տալիս, որ Պարվուսի պլանը համաձայնեցված էր նաև թուրքական կառավարության հետ: Այլ կերպ չէր կարող լինել: Գերմանա-թուրքական գործակալը, բնականաբար, պարտավոր էր, Գերմանիայի և Թուրքիայի շահերից ելնելով, պլանը համաձայնեցնել երկու պետությունների կառավարությունների հետ, որոնք պետք է վճարեին դրա համար:

Երիտթուրքերը գործում էին Պարվուսի ղեղատոմսերով: Միմյոք Վրացյանը «Հայաստանի Հանրապետությունը» գրքում պատմում է.

1 Նույն տեղում, էջ 117:

2 Նույն տեղում, էջ 112:

«1914 թ. հունիսին Էրզրումում բացվում է Հ. Յ. Դաշնակցության 8-րդ համագումարը»¹։

Համագումարի աշխատանքներն ավարտված էին արդեն, երբ Էրզրում հասան Իթքիհադի լիազորներ Բեհաեդդին Շաքիրը և Նաջի բեյը, իրենց հետ բերելով մի քանի տասնյակ պարսիկ-ադրբեջանցի զործակալներ ու մարտիկներ։ Իթքիհադի լիազորներն առաջարկեցին Հ. Յ. Դաշնակցության ներկայացուցիչներին, որ դաշնակցականները ռուս-թուրքական պատերազմի ընթացքում միանան թուրքերին՝ աշխատելով ռուսների դեմ ապստամբեցնել կովկասահայերին։ Նրանք պնդում էին, որ վրացիք և կովկասյան թուրքերը (ինա՝ ադրբեջանցիները- Ռ. Խ.) արդեն տվել են իրենց համաձայնությունը և սկսել են պատրաստվել ապստամբության։ Եվ հիրավի, իթքիհադական լիազորների հետ Էրզրում էին եկել և կովկասցի թուրքեր, որոնք հավաստիացնում էին, թե գնում են Կովկաս խռովություններ և ապստամբություններ առաջ բերելու և պատերազմի պարագային, ռուս բանակի թիկունքը կազմալուծելու նպատակով»²։

Սապահ-Գյուլյանի տեղեկությունների համաձայն, Պարվուզը «իր մասնավոր հովանավորության տակ առնելով Կ. Պոլսո մեջ ապաստանող մի քանի վրացի սոցիալիստների, նրանց ուղարկել էր աջարների մեջ՝ ռուս պետության դեմ ապստամբություն հանելու»³։

Թուրքիան ցանկանում էր Գերմանիայի օգնությամբ իրագործել իր պանթուրքիստական, գալթոդական պլանները Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Իրանական Ադրբեջանի, մերձվոլգյան շրջանների և Միջին Ասիայի նկատմամբ։ 1914 թ. օգոստոսի 6-ին, պատերազմի հայտարարման առաջին օրերին, պայմանագիր կնքվեց Թուրքիայի և Գերմանիայի միջև, որի 5-րդ հոդվածում ասվում էր. «Գերմանիան կը հարկադրե շտկել Օսմանյան կայսրության արևելյան սահմաններն այն ձևով, որ ապահովվի Տաճկաստանի անմիջական շփումը Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»⁴։ Պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ հրատարակված կոչի մեջ Օսմանյան Թուրքիայի կառավարությունը գրում էր. «Չմոռանա՞նք, որ համաշխարհային պատերազմին մեր մասնակցության նպատակը մեզ սոսկ վերահաս սպառնացող կորուստ չէ, այլ մենք կհետապնդենք ավելի անմիջական նպատակ մը- մեր ազգային իտեալին իրականացումը։ Մեր ժողովրդին և

հայրենիքին ազգային իտեալը մեզի մեկ կողմէ կը մղէ խորտակելու Մուկոլյան թշնամին, ատով հասնելու մեր կայսրության համար բնական սահմանի մը, որուն մեջ կը պարփակվին ու կը միանան մեր բոլոր ազգակից եղբայրները»⁵։

Եվ այսպես, համաձայն Պարվուզի պլանի՝ Գերմանիայի դրամական ու նյութական օգնությամբ, ռուսական կայսրությունը մասնատվում էր և կործանվում, նրա տարածքների հիմնական մասն անցնում էր Գերմանիային և Թուրքիային։

Այնպիսի լինի, ելնելով պատմության վերը շարադրված իրադարձությունների գլխավոր մասնակիցների ազգային պատկանելության փաստից, Հայոց ցեղասպանության նկատմամբ ցուցաբերած մերժողական վերաբերմունքում տեսնել սիոնիզմի ազդեցությունը։

Հրեական ազգային-քաղաքական միտքը սերվել է հիմնականում Ռուսաստանում, տեղական միջավայրում⁶։ Եւ դա պատահական երևույթ չէր։ Հարցն այն էր, որ հակասեմիտիզմը միայն Ռուսաստանում էր պաշտոնական օրենսդրական ճանաչում գտել։ Ռուսաստանում միայն հրեաների համար 1791-1917 թթ. գոյություն ունեւ օրենք, որով նրանց թույլատրվում էր բնակվել որոշակի տարածքներում։ Ընդ որում, այդ տարածքների սահմանները տարեցտարի սեղմվում էին։ Ուսումնական հաստատություններ ընդունվելու համար հրեաների առջև դրված էին սահմանափակումներ։ Պետական մակարդակով, պարբերաբար, կազմակերպվում էին հրեական ջարդեր։

Հրեական ազգային-քաղաքական միտքը հրեական հարցը լուծելու երկու ուղի էր տեսնում⁷։ Առաջինը՝ պատմական իրավունքի վրա խարսխված պահանջատիրությունն էր, պատմական Հայրենիքի ազատագրումը, հրեական անկախ պետականության ստեղծումը, որը պատմության մեջ մտել է սիոնիզմ անունով։ Սիոնիզմը հրեաների ազգային գաղափարախոսությունն է⁸։ Երկրորդը՝ համաշխարհային հեղափոխության միջոցով մարդկության ապազգայնացումն էր, ինտերնացիոնալիզացիան, որի արդյունքում կազատագրվեին ամբողջ աշխարհում սփռված հրեաները։ Այդ ուղղությունն էին որդեգրել հրեական ծագում ունեցող բոլոր մարքսիստները, որոնք դեմ էին հրեական ազգային պե-

¹ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բիւրուք, 1958, էջ 8։

² Ս. Սապահ-Գյուլյան, Պարսիստանություններ, էջ 296։

³ «Վիմ», 1937, N 3, հուլիս-սեպտեմբեր, էջ 83։

¹ Չարեանդ, Միացյալ, անկախ Թուրանիա, Արհմը, 1987, էջ 107։

² Shu Duglas Pug, Спор о Сионе, М., 1993, с. 188-194։

³ Նույն տեղում, էջ 191։

⁴ Shu A. B. Волков, П. Г. Тарасов, Государство Израиль и Всемирный еврейский конгресс, М., 1991, с. 71։

տության ստեղծման գաղափարին և այդ պատճառով էլ պայքարում էին սիոնիզմի դեմ: Բացառություն էր կազմում Լև Տրոցկին (Բրոնշտեյն), որը տարագրության տարիներին՝ 1937 թվականին, նկատի ունենալով հրեաների տարագրության ողբերգական հետևանքները ֆաշիստական Գերմանիայում և բոլշևիկյան Ռուսաստանում, հանգեց հրեական ազգային պետության ստեղծման անհրաժեշտության գաղափարին¹:

Պարվուսը, որպես մարքսիստ, նույնպես չէր բաժանում սիոնիզմի գաղափարախոսությունը, և գտնում էր, որ հրեաների ազատագրությունը կգա համաշխարհային հեղափոխության շնորհիվ: Սակայն Ռուսաստանի հրեային բնորոշ ատելությունը ցարական ինքնակալության նկատմամբ, անշուշտ, դրել էր իր կնիքը նրա մտածելակերպի և գործելակերպի վրա, որի պատճառով նա գտնում էր, որ համաշխարհային հեղափոխության առաջին գոհը պետք է դառնա Ռուսաստանը:

Պատմաբան Իգոր Բունիչը համոզիչ կերպով բացահայտում է Պարվուսի մտածելակերպը. «Ինչպե՞ս մեր՝ համաշխարհային պրոլետարիատի կողմից, օգտագործել պատերազմը և որոշել՝ ու՞մ կողքին կռվել: Բոլորին հայտնի է, որ աշխարհի ամենահզոր սոցիալ-դեմոկրատիան՝ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատիան է: Եթե սոցիալիզմը Գերմանիայում ջախջախվի, նա կջախջախվի ամենուրեք: Դեպի համաշխարհային սոցիալիզմը տանող ճանապարհը Գերմանիայի ռազմական ջանքերին սատար կանգնելն է: Իսկ այն, որ ռուսական ցարիզմը կռվում է Անտանտի կողմում, պարզից էլ պարզ մեզ ցույց է տալիս, թե ով է սոցիալիզմի իսկական թշնամին: Եվ այսպես, ամբողջ աշխարհի բանվորները պետք է կռվեն ռուսական ցարիզմի դեմ: Համաշխարհային պրոլետարիատի խնդիրն է՝ Ռուսաստանի ոչնչացնող ջախջախումը և հեղափոխությունն այնտեղ: Եթե Ռուսաստանը չապակենտրոնանա և չդեմոկրատացվի, վտանգը կսպառնա ամբողջ աշխարհին: Եվ քանի որ Գերմանիան է տանում մոսկովյան իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի գլխավոր ծանրությունը, ապա հեշտ է հանգել միակ ճիշտ եզրակացությանը. Գերմանիայի հաղթանակը սոցիալիզմի հաղթանակն է»²:

Պարվուսի պլանն ավարտվում էր հետևյալ հեռանկարով. «Եվ կենտրոնացված Ռուսաստանն ընդմիջտ կկործանվի: Ներքին պայքարը մինչև հիմքերը կցնցի Ռուսաստանը: Գյուղացիները կսկսեն ուժով հողը խլել կալվածատերերից: Չինվորները խմբերով կփախչեն խրամատներից՝

ապահովելու իրենց մասը հողի բաժանման ժամանակ: Կապուտամբեն սսլաների դեմ, կզնդակահարեն գեներալներին. բայց հեռանկարի այդ մասը հարկ է թաքցնել, այն կարող է տհաճ նախազգացումներ առաջացնել պրոսացիների մոտ:

Սակայն, դա դեռևս բոլորը չէ: Ռուսաստանը ներսից քայքայել ավերիչ պրոպագանդայով, նրա վրա տեղալ համաշխարհային մամուլի ամբողջ թշնամանքը: Հակացարական կամպանիա կսկսեն տարբեր երկրների սոցիալիստական թերթերը, սակայն ծախից աջ ընդգրկելով, այդ հալածանքը հետո կհրապուրի լիբերալ մամուլին, այսինքն՝ ամբողջ աշխարհի մամուլի մեծամասնությանը: Եվ, ընդսմին, հատկապես կարևոր է ընդգրկել Միացյալ Նահանգների հասարակական կարծիքը: Իսկ ցարիզմի մերկացումով՝ միաժամանակ կապաքողարկվի և կխաբիսվի ամբողջ Անտանտը»³: Ահա թե ինչ էր առաջարկում Լենինին Պարվուսը:

Ամփոփելով նյութը, Սոլժենիցինը նկատում է. «Տեսականորեն, ընդհանուր առմամբ, Լենինն այս ամենը ձևակերպել էր դեռ պատերազմի սկզբում: Ընդհանուր առմամբ, Լենինն այդ էր ուզում, դրան էր ձգտում: Բայց Պարվուսի պլանը ապշեցնում էր գործնականությամբ և կոնկրետությամբ»⁴:

Այսպիսով, կողմերի քաղաքական ընթերցումները լիովին համընկնում էին, ինչը և հանգեցրեց Պարվուս-Լենին խոր քողարկված գործարքին: Գերմանա-թուրքական գործակալ Պարվուսի պլանը, փաստորեն, վերածվեց Պարվուս-Լենին պլանի:

Ինչպես տեսանք, Պարվուսի պլանը ներկայացվել էր գերմանական կառավարությանը, որի համար նա պետք է ստանար 20 միլիոն: Ընդ որում, ըստ Պարվուսի, նրա ներկայացրած պլանում «գլխավոր տեղը» պատկանում էր Լենինին: Հասկանալի է, որ եթե Պարվուսը 1915 թ. իր պլանի համար պետք է ստանար 20 միլիոն, ապա «գլխավոր տեղը» գրավող Լենինը ևս պետք է վարձատրվեր համապատասխան ձևով: Գերմանական սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխ Էդուարդ Բերնշտայնի փաստարկված կարծիքով, 1917 թ. միայն Լենինը և իր նվիրյալները ստացել էին արդեն 50 միլիոնից ավելի ոսկի մարկ⁵: Տասնամյակներ շարունակ շրջանառության մեջ գտնվող լուրերն այն մասին, որ բոլ-

¹ Shu Исаак Дойчер, Троцкий в изгнании, М., 1991, с. 408-409.

² И. Бунич, Золото партии, СПб., 1992, с. 35.

¹ А. Солженицын, Ленин в Цюрихе, с. 117-118.

² Նույն տիպով, էջ 132:

³ Shu Д. Волкогонов, Ленин. Политический портрет, книга I, М., 1994, с. 222.

շնիկներն իրոք գումարներ են ստացել արտասահմանից, իր հաստատումը ստացավ վերջերս ռուս ճանաչված պատմաբան Դմիտրի Վոլկոգոնովի կողմից, որն ուսումնասիրել էր ԽՄԿԿ-ի Քաղբյուրոյի գաղտնի արխիվային ֆոնդերը։ Նա «Լենին. քաղաքական դիմանկար» երկհատորյակում գրում է. «Փաստաթղթերը վկայում են, որ բուլշևիկների թեղափոխական ակտիվացման և նրանց ցույց տրված ռոլդակի ֆինանսական օգնության լայնածավալ գործողությունում գերմանական կողմից մասնակցում էին Վիլհելմ II-ը, գեներալ Լյուդենդորֆը, գործարար Գադափարախոս Պարվուսը, կանցլերներ ֆոն Բետման-Հոլվեգը և կոմս ֆոն Քյուլմանը, Մոսկվայում գերմանական դեսպաններ՝ կոմս ֆոն Միրբախը և բարոն ֆոն Ռոմբերգը, գերմանական զանապահության քարտուղար Ջիգֆրիդ ֆոն Ռեդերնը, ավելի մանր դեմքեր։

Բուլշևիկների կողմից այդ ներկայացմանը մասնակցում էին Գալեցկի-Ֆյուրստենբերգը, Կրասինը, Իոֆֆեն, Կոզլովսկին, Կեսկուլան, Ռադեկը, Ռակովսկին, մի շարք այլ դեմքեր»¹։

Իսկ ինքը՝ Լենինը։

Դ. Վոլկոգոնովը գրում է. «Ինքը, որպես փորձառու դերուսույց, գտնվում էր կուլիսներում և հետևում էր, թե ինչպես է ընթանում ներկայացումը, որը ստեղծվել էր իր մասնակցությամբ»²։ Լենինը շատ էր ցանկանում հասնել քաղաքական հաղթանակի, նա տարված էր իշխանությունը գրավելու մոլուցքով։ Համաշխարհային պատերազմը շարունակվում էր, և պատերազմում ցարական Ռուսաստանի պարտությունը հաղթանակի ուղի էր բացում Լենինի համար։ Մյուս կողմից էլ, դրանով իսկ իրականացվում էր Գերմանիայի և նրա դաշնակից Թուրքիայի հաղթանակը, որը հանդիսանում էր Պարվուս-Լենին պլանի հիմնական գաղափարը։ Եվ Լենինն առանց տատանվելու բռնեց այդ ուղին։ Եվ թեկուզ ճանապարհին ամբողջ ժողովուրդներ կործանվեին։ Գլխավորը ինդուստրիալ հաղթանակն էր, իշխանության գրավումը։

Պարվուսի պլանը իրականացնելու համար Լենինն առաջ քաշեց «Պատերազմում իր կառավարության պարտության» կարգախոսը։ Գործնականում այդ կարգախոսը նշանակում էր ցարական Ռուսաստանի պարտությունը, նրա տարածքների մասնատումը, Գերմանիայի և Թուրքիայի հաղթանակը։ Իսկ Թուրքիայի հաղթանակը հայ ժողովրդին բերելու էր անհամար կորուստներ, ազգային ողբերգություն։ Հայ բուլ-

¹ Նույն տեղում, էջ 224.

² Նույն տեղում։

շնիկները կուրորեն հետևեցին լենինյան քաղաքականությանը և օբյեկտիվորեն ուղի հարթեցին սեփական ժողովրդի կործանման համար։ «Թեքել են Ռուսաստանի վրա, քանզի բուլշևիկ են»¹. Լենինի այս «թևավոր» ասույթը իր հայրենիքի մասին հայ բուլշևիկները գործնականում կիրառեցին Հայաստանի հարցում։

Հասկանալի է, որ կենսագործելով Գերմանիայի և Թուրքիայի հաղթանակի, Ռուսաստանի պարտության Պարվուս-Լենին պլանը, որը և հանգեցրեց հայ ժողովրդի ողբերգությանը, Լենինը, բնականաբար, չպետք է «նկատեր» մարդկությանը ցնցած Հայոց Մեծ եղեռնը։

Մեր եզրակացության օգտին վկայող մաս ուրիշ փաստեր կան։ Եթե 1912-1914 թթ. լենինյան «Պրավդան» հրապարակում էր հոդվածներ, որոնցում դատապարտվում էին Թուրքիայում հայերի հալածանքները, ապա 1915 թվականի մայիսից, Պարվուսի հետ հանդիպումից հետո, Լենինը և նրա մերձավոր վտարանդի շրջապատը (Գալեցկի, Բուխարին, Ռադեկ, Ուրիցկի և ուրիշներ) լուրջաբար էին մատնում մի ամբողջ ժողովրդի ցեղասպանությունը։

Ժամանակակից լենինյանների երկշտ հակաճառությունները, թե իբր Լենինը պաշտոնապես իր վերաբերմունքը Եղեռնի նկատմամբ մի շարք սոցիալիստների հետ համատեղ գրավոր կերպով արտահայտել է ցիմմերվալդյան (1915) և կինտալյան (1916) կոնֆերանսներում, չի դիմանում որևէ քննադատության։ Կոնֆերանսի նյութերը, որոնք վաղուց տպագրված են, ապացուցում են, որ այնտեղ ընդհանրապես հայ ժողովրդի ցեղասպանության հիմնահարցը ոչ մեկի կողմից չի բարձրացվել, չի քննարկվել և չի արձանագրվել։ Եվ պատահական չէ, որ նույնիսկ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուն կազմողները չկարողացան գետեղել այդ գրքում գոնե մի տող վերոհիշյալ կոնֆերանսների փաստաթղթերից։

1915 թ. Շվեյցարիայի իրողություններին անտեղյակ ընթերցողը կարող է առարկել, իսկ եթե Լենինը չգիտեր ցեղասպանության մասին։ Բայց չիմանալ հնարավոր չէր։ Ամբողջ աշխարհի բերքերը հեղեղված էին բարբարոսության այդ խայտառակ ակտի մասին մամրամասն հաղորդագրություններով։ Իսկ Լենինի կենսագրական ժամանակագրությունը, որը սիրով կազմել են նրա խորհրդային ջատագովները, հաճկատարությամբ հաղորդում է, թե քննարկվող շրջանում ինչպես էր Իսիշը

¹ И. Бунин, Золото партии, с. 17.

² И. А. Бергман, История и смысл русского коммунизма, М., 1980, с. 97.

անքուն գիշերներ անցկացնում Շվեյցարիայի գրադարանում՝ ընթերցելով միջազգային մամուլը:

1915 թվականի սեպտեմբերի 9-ին «Ժուրնալ դը Ժնև» խոշորագույն շվեյցարական թերթն իր առաջնորդողը նվիրեց Հայոց եղեռնին: Լրագիրը գրում էր. «Ներկա ժամանակ տեղի է ունենում այնպիսի հրեշավոր գործողություն, որի համեմատ զուսպագրվում է ամեն ինչ. կատարվում է մի ամբողջ ժողովրդի բարբարոսական ոչնչացում»¹: Թերթում տպված նյութին արդեն սեպտեմբերի 10-ին արձագանքեց, նույնպես տարագրության մեջ գտնվող, թուրք գեներալ Շերիֆ փաշան, որն իր մամուլում, ուղղված թերթի խմբագրությանը, մասնավորապես նշում էր. «Պրն խմբագիր: Թույլ տվեք, ի հավելումն պերճախոս հոդվածի, որը գետնեղված է Ձեր հարգարժան լրագրում, հայտնել իմ անձնական վրդովմունքն այն մեթոդների հանդեպ, որոնք կիրառվում են «Միություն և առաջադիմություն» արյունոտ կոմիտեի կողմից»²:

Բայց, համաշխարհային հեղափոխության առաջնորդի մոտ, որը տիրապետում էր շատ լեզուների, բառեր չգտնվեցին մույնիսկ ռուսերենով ցավակցություն հայտնելու համար: Ջանգվածային տեռորը պետական քաղաքականություն դարձրած, համակենտրոնացման ճամբարների հիմնադիր, մի ակնթարթում Ռոմանովների ամբողջ գերդաստանը ոչնչացրած այդ մարդն, անտարակույս, գտնվում էր քաղաքակիրթ մարդկությանը բնորոշ պատվի և բարոյականության կոորդինատների համակարգից դուրս:

Լենինի և նրա նվիրյալների համար ցեղասպանությունը հանդիսանում էր գործունեության միանգամայն ընդունելի մեթոդ: Ռուս զլոդ Վլադիմիր Սոլոուխինն իր «Ցերեկվա լույսով» գրքում օգտագործում է Լենինի մի մամակ, որում վերջինս պահանջում է, կարմիրների նահանջի դեպքում, հրկիզել Բաքուն և նրա բնակչությանը: Հետագոտող Բ. Պուգաչևը, որը հայտնագործել է այդ մամակը լենինյան փակ արխիվում, մասնավորապես ընդգծում է. «Լենինի մամակները նրան բնութագրում են որպես ծայրահեղ դաժան մարդու, ավելին՝ որպես մարդատյաց անձի»³:

Արդյո՞ք Լենինի նաև այդ անձնական հատկանիշով չի բացատրվում այն, որ նա «չնկատեց» հայերի ցեղասպանությունը Բաքվում 1918 թ. սեպտեմբերին, երբ երիտթուրքերը՝ մուսավաթականների օգնությամբ,

ոչնչացրին 30 հազար հայ: Չիմանալ Հայոց ցեղասպանության այդ նոր խայտառակ փաստի մասին նա չէր կարող, քանզի Լենինի կրեմլյան գրադարանում գտնվում էր Բախշի Իշխանյանի «Բաքվի մեծ սարսափները» արժեքավոր գիրքը ռուսերեն լեզով, որը նվիրված է 1918 թ. սեպտեմբերյան ողբերգական դեպքերին: Լենինի բարոյականությունը շատ դիպուկ է բնորոշել ռուս նշանավոր փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը. «Լենինը թույլ էր տալիս պայքարի բոլոր միջոցները հեղափոխության նպատակին հասնելու համար: Նրա համար բարիք էր այն ամենը, ինչ ծառայում է հեղափոխությանը, չարիք՝ այն ամենը, ինչը խանգարում էր նրան...: Համակվելով ծայրահեղական հեղափոխական գաղափարով, նա, ի վերջո, կորցրեց բարու և չարի անմիջական տարբերության ըմբռնումը, կորցրեց անմիջական կապը կենդանի մարդկանց հետ, թույլ տալով խաբեություն, կեղծիք, բռնություն, դաժանություն...: Բացառապես մի գաղափարով համակվելը հանգեցրեց գիտակցության ահավոր նեղացման և բարոյական այլասերման, պայքարի ընթացքում միանգամայն անբարոյական միջոցների թույլատրման»⁴:

Լենինը, լուրջյան մատնելով հայերի ցեղասպանությունը, այնուհետև կատարեց երկրորդ սարսափելի քայլը՝ համագործակցության զնաց երիտթուրք ցեղասպանների հետ: Այս շրջանում բեմահարթակ է բարձրանում մի նոր դեմք՝ Կարլ Ռադեկը (Չոբելզոն): Հրեա, սոցիալիստ-դեմոկրատ, փայլուն լրագրող և հանդուգն, հնարամիտ քաղաքական գործիչ Ռադեկը մտերմացել էր Լենինի հետ շվեյցարական վտարանդիության ժամանակ: Նա գերմանական կնքված վագոնի ուղևորներից էր: 1917 թ. մարտին Ստոկհոլմում միանում է Գանեցկուն և բուլշևիկների ԿԿ արտասահմանյան բյուրոյի ցուցատախտակի հետևում թաքնված, ապահովում է կապը Պարվուսի հետ: 1918 թ. վերջին բուլշևիկները ուղարկում են Ռադեկին Գերմանիա, «օգնելու» այնտեղ պրոլետարական հեղափոխության կազմակերպմանը: Չերքակալվում է, բանտարկվում, հետո՝ ազատվում: Լենինը Ռադեկին օգտագործում էր ամենամուփ և առեղծվածային առաքելությունների կազմակերպման գործում:

Ռադեկը հանձնարարություն է ստանում Լենինից՝ շփման մեջ մտնել Գերմանիայում ապաստան գտած երիտթուրք պարագլուխների հետ՝ Անգլիայի դեմ խորհրդա-թուրքական միասնական ճակատ ստեղծելու համար: Երիտթուրքերի հետ կապն իրականացնելու համար Ռադեկը դիմում է իր վաղեմի բարեկամ Պարվուսին: Վերջինս սիրահոծար ապա-

1 Н. А. Бердяев, Истоки и смысл русского коммунизма, М., 1990, с. 97.

1 Геноцид армян в Османской империи, Ереван, 1982, с. 355.

2 Նույն փնդում, էջ 357:

3 В. Солоухин, При свете дня, М., 1992, с. 216.

հովում է այդ կապը (նկատենք, որ երբ 1921 թ. Վահան Փափազյանը դիմում է Պարվուսին խնդրելով ապահովել կապը բուլնիկների հետ, գերմանա-թուրքական գործակալը մերժում է, ստելով, թե՝ «մեծամասնականներն ոչ ոք կճանչնան»):

1919 թ. ուշ աշնանը տեղի է ունենում Ռադեկ-Թալեաթ հանդիպումը, որն ազդարարում է մի նոր փուլ բուլնիզմի քաղաքական վարքագծում՝ համագործակցություն դադարեցնելու հետ: Մոտավորապես նույն ժամանակ Ռադեկը հանդիպումներ է ունենում Էնվերի և Ջեմալի հետ: Մոսկվայում թուրք դեսպան Ալի Ֆուադ Ջեքեսոյը այդ առիթով իր հուշերում գրում է. «Երրորդ միջազգայինի գլխավոր անձնավորություններից մեկը՝ բուլնիկ խմբագիր Ռադեկը, իմանալով, որ այդ թվականին Բեռլինում գտնվող Թալեաթ փաշան Անատոլիի ազգային շարժման հետ սերտ առնչություն ունի, շփման մեջ է մտել նրա հետ: Ռադեկը թելադրել էր նախկին ռազմական նախարար Էնվեր և նախկին ծովային նախարար Ջեմալ փաշաներին ուղարկել Մոսկվա և խոստացել էր նրանց, որ պիտի ապահովվի օգնությունը Անատոլիի շարժմանը: Էնվեր և Ջեմալ փաշաները տարբեր թվականներին և տարբեր ճանապարհներով մեկնել էին Բեռլինից: Ջեմալ փաշան իր ընկերոջից ավելի առաջ էր Մոսկվա հասել: Թուրքական պաշտոնական պատվիրակությունը դեռ ճանապարհին էր գտնվում, իսկ Էնվեր փաշան խորհրդային մայրաքաղաք էր հասել Բեքիր Սամի Բեյի պատվիրակությունից հետո»¹:

Առաջինը Մոսկվա հասած Ջեմալ փաշան 1920 թ. հունիսի 11-ին Մուստաֆա Զեմալին գրած նամակում հաղորդում է. «Մոսկվայում 15 օրվա աշխատանքից հետո ռուսական կառավարության կողմից ընդունվեց, որ գործունեություն ձեռնարկեն Թուրքեստանում, Աֆղանստանում և Հնդկաստանում... Այս նպատակով, երբ Տաշքենդ հասնեն, պիտի խնդրեն Էմիրից ընդունել ինձ»²: Իսկ 1920 թ. օգոստոսի 26-ին Մոսկվայից Զեմալին նամակ ուղարկեց արդեն Էնվեր փաշան: Նամակում հատկապես ընդգծվում էր. «Ես այստեղ եկա այն նպատակով, որ իսլամական մթնոլորտում ստեղծեն կազմակերպություններ և երկրի փրկության սիրույն աշխատեն: Տեսնվեցի խորհրդային իշխանության ղեկավարների հետ և նրանց էլ իմ մտքերին համախոհ գտա»³:

Բուլնիկներից ստանալով ֆինանսական խոշոր ներարկումներ, դա-

1 ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 80, էջ 88:
2 Նույն տեղում, էջ 69:
3 Նույն տեղում, էջ 72:

հովում է այդ կապը (նկատենք, որ երբ 1921 թ. Վահան Փափազյանը դիմում է Պարվուսին խնդրելով ապահովել կապը բուլնիկների հետ, գերմանա-թուրքական գործակալը մերժում է, ստելով, թե՝ «մեծամասնականներն ոչ ոք կճանչնան»):

1919 թ. ուշ աշնանը տեղի է ունենում Ռադեկ-Թալեաթ հանդիպումը, որն ազդարարում է մի նոր փուլ բուլնիզմի քաղաքական վարքագծում՝ համագործակցություն դադարեցնելու հետ: Մոտավորապես նույն ժամանակ Ռադեկը հանդիպումներ է ունենում Էնվերի և Ջեմալի հետ: Մոսկվայում թուրք դեսպան Ալի Ֆուադ Ջեքեսոյը այդ առիթով իր հուշերում գրում է. «Երրորդ միջազգայինի գլխավոր անձնավորություններից մեկը՝ բուլնիկ խմբագիր Ռադեկը, իմանալով, որ այդ թվականին Բեռլինում գտնվող Թալեաթ փաշան Անատոլիի ազգային շարժման հետ սերտ առնչություն ունի, շփման մեջ է մտել նրա հետ: Ռադեկը թելադրել էր նախկին ռազմական նախարար Էնվեր և նախկին ծովային նախարար Ջեմալ փաշաներին ուղարկել Մոսկվա և խոստացել էր նրանց, որ պիտի ապահովվի օգնությունը Անատոլիի շարժմանը: Էնվեր և Ջեմալ փաշաները տարբեր թվականներին և տարբեր ճանապարհներով մեկնել էին Բեռլինից: Ջեմալ փաշան իր ընկերոջից ավելի առաջ էր Մոսկվա հասել: Թուրքական պաշտոնական պատվիրակությունը դեռ ճանապարհին էր գտնվում, իսկ Էնվեր փաշան խորհրդային մայրաքաղաք էր հասել Բեքիր Սամի Բեյի պատվիրակությունից հետո»¹:

Առաջինը Մոսկվա հասած Ջեմալ փաշան 1920 թ. հունիսի 11-ին Մուստաֆա Զեմալին գրած նամակում հաղորդում է. «Մոսկվայում 15 օրվա աշխատանքից հետո ռուսական կառավարության կողմից ընդունվեց, որ գործունեություն ձեռնարկեն Թուրքեստանում, Աֆղանստանում և Հնդկաստանում... Այս նպատակով, երբ Տաշքենդ հասնեն, պիտի խնդրեն Էմիրից ընդունել ինձ»²: Իսկ 1920 թ. օգոստոսի 26-ին Մոսկվայից Զեմալին նամակ ուղարկեց արդեն Էնվեր փաշան: Նամակում հատկապես ընդգծվում էր. «Ես այստեղ եկա այն նպատակով, որ իսլամական մթնոլորտում ստեղծեն կազմակերպություններ և երկրի փրկության սիրույն աշխատեն: Տեսնվեցի խորհրդային իշխանության ղեկավարների հետ և նրանց էլ իմ մտքերին համախոհ գտա»³:

Բուլնիկներից ստանալով ֆինանսական խոշոր ներարկումներ, դա-

1 ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 80, էջ 88:
2 Նույն տեղում, էջ 69:
3 Նույն տեղում, էջ 72:

հիմններն անցան գործի՝ Ջեմալը մեկնեց Տաշքենդ, իսկ Էնվերը՝ հրեա բոլշևիկներ Ջիմովկի, Ռադեկի, Բելա Կուսի հետ միասին մեկնեց Բաքու՝ մասնակցելու Արևելքի ժողովուրդների համագումարին և գերեզման փորելու Հայաստանի առաջին Հանրապետության համար։ Լենինի աջակցությամբ կոմունիստական ինտերնացիոնալում բարձրագույն պաշտոններ զբաղեցրած բոլշևիկները՝ Ջիմովկի (Ռադոմիշելսկի՝ Ապֆելբաում) դեկավարությամբ, Արևելքի ժողովուրդների Բաքվի համագումարից դեռ մեկ ամիս առաջ, Կոմիստերնի երկրորդ համաժողովում, հրապարակաբար դատապարտեցին սիոնիստների ջանքերը՝ Պաղեստինում հայրենի օջախ ստեղծելու ուղղությամբ¹։

Ժխտելով սեփական ազգի անկախ պետություն ունենալու իրավունքը, նրանք, բնականաբար, առավել ևս դեմ էին հայկական անկախ պետականության ստեղծմանը, քանզի, ինչպես ասվում է Կոմիստերնի երկրորդ համաժողովի նյութերում, «Ելնելով ժամանակակից միջազգային իրավությունից, չկա փրկություն կախյալ և թույլ ազգերին, բացի Խորհրդային Հանրապետությունների Միությունից»²։

Բոլշևիկների բարոյական անկումը հայոց եղեռնի հարցում ուներ զարգացման խիստ տրամաբանական օրինաչափություն։ Լռության մատնելով հայոց եղեռնը, այնուհետև համագործակցության մեջ մտնելով եղեռնագործների հետ, Լենինն ու նրա նվիրյալները անխուսափելիորեն և ուղղակիորեն պիտի աջակցեին մի նոր եղեռնագործության, ինչը տեղի ունեցավ 1920 թ.։

1920 թ. օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի նշանավոր պայմանագիրը, որը միջազգային իրավական փաստաթղթերում նվիրագործում էր Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարը։ Այդ գաղափարին դեմ էին թե՛ Թուրքիան և թե՛ բոլշևիկյան Ռուսաստանը։

Թուրքիան ցանկանում էր պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության անձեռնմխելիությունը, իսկ բոլշևիկներն ունեին իրենց ծավալապաշտական նկրտումները։ Շահերը համընկնում էին, ինչը և հանգեցրեց բուրժ-բոլշևիկյան դաշինքի։

Դեռ 1919 թ. վերջին Ստամբուլ էր ժամանել հայտնի բոլշևիկ Շալվա Էլիավան և հաղորդել էր թուրքերին, որ բոլշևիկները «պիտի լիովին ճանաչեն, ամրացնեն և արագորեն սկսեն օժանդակել իմպերիալիստական

¹ Shu Коммунистический интернационал в документах, М., 1933, с. 129.

² Նույն տեղում։

ճակատի հանդեպ բուրժական ազգային շարժմանը»¹։

Ջեմալը 1920 թ. ապրիլի 26-ին Լենինին գրած նամակում պարզապես առաջարկում էր բաժանել Անդրկովկասը, ընդ որում՝ Վրաստանն ու Ադրբեջանը նախատեսում էր թողնել Ռուսաստանին, իսկ Հայաստանը հռչակել միայնակ։ Միաժամանակ, «իմպերիալիզմի» դեմ պայքար մղելու պատրվակով, Ջեմալը խնդրում էր Լենինից զենք, պարեն, դեղորայք, ռազմաինժեներական նյութեր՝ 5 միլիոն լիրա ոսկի ընդհանուր արժույթով²։

Մոսկվա ուղարկվեց բուրժական պաշտոնական պատվիրակություն, որը 1920 թ. օգոստոսի 14-ին ընդունվեց Լենինի կողմից։ Ինչպես նշում է իր հուշերում Ալի Ֆուադ Ջեքետյը, «մեր ներկայացուցիչները, երբ հիշեցրել են, որ հայերի աղակարարությունը խիստ շատ է և տևականորեն իրենց անմեղության մասին խոսելուն հակառակ, կարծվածին չափ անմեղ չեն, Լենինը ասել է. «Այո, ճիշտ է, սակայն կասկած չկա, որ թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը շատ մոտ ժամանակ պետք է ստանան մեր ցանկացած ձևը»³։ Թուրքական պատվիրակության նախագահ Բեքիր Սամի բեյը, ամփոփելով իր տպավորություններն այդ հանդիպումից, ընդգծում էր. «Լենինը շատ համակրելի դիմագծերով, շատ բացսիրտ մի անձնավորություն գտանք, մեզ և իսլամական աշխարհի հանդեպ շատ բարյացակամ նկատեցինք»⁴։ Բեքիր Սամի բեյի նշած «բարյացակամության» ակնառու ապացույցն էր 1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում ստորագրված բուրժ-բոլշևիկյան դաշնագրի նախագիծը և Լենինի համաձայնությունը Հայաստանի Հանրապետության վրա հարձակում սկսելու մասին։

Նախագծի հենց առաջին հոդվածը հակահայկական է և մերժում է Սևրի պայմանագիրը։ Փաստաթղթում ասվում է. «Ռուսական Հանրապետությունը պարտավորվում է բացարձակապես չճանաչել Թուրքիային վերաբերող և բուրժ ազգային կառավարության ներկայացուցիչ Ազգային մեծ ժողովի կողմից չվավերացված պետական որևէ համաձայնագիր»⁵։

Բոլշևիկները Պարվուսի միջնորդությամբ և Թալեաթի օգնությամբ,

¹ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 80, էջ 88.

² Shu Дженью Харков, Военные в политической жизни современной Турции, София, 1989, с. 268.

³ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 80, էջ 106.

⁴ Նույն տեղում, էջ 107.

⁵ Գ. Լալյան, Հայաստան և Հայ դարը, Նրևան, 1991, էջ 255.

Գերմանիայում գնեցին 6000 հրացան, ավելի քան 5 միլիոն փամփուշտ, 17.600 արկ և այդ ամենը նվիրեցին քեմալականներին: Իսկ սեպտեմբերին Թուրքիան բուլղարիայի Ռուսաստանից ստացավ 200,6 կգ ծուլածո ոսկի:

Կոմիսներն ղեկավարությամբ Արևելքի ժողովուրդների Բաքվի համագումարի կողմից ստեղծված «Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողության խորհուրդը» սեպտեմբերի 17-ին մի որոշում է ուղարկում Կոմիսներին, ՌԿԿ Կենտկոմին և Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսարին, որում ասվում էր. «Ուժերի ու միջոցների սպառման հետևանքով Թուրքիայում մարտում է ազգային-հեղափոխական շարժումը: Մուստաֆա Քեմալի Ազգային մեծ ժողովի կառավարությունը դժվարությամբ է շարունակում ռազմական գործողությունները: ... Նման հանգամանքներում ազգայնականներն ի վիճակի չեն պայքարել շարունակել մեկ ամսից ոչ ավելի: Եթե այդ ընթացքում կապ չհաստատվի Խորհրդային Ռուսաստանի հետ, և վերջինիս կողմից չցուցաբերվեն նյութական օգնություն ու քարոյական աջակցություն, ապա ազգային շարժումը կճնշվի: Ազգային մեծ ժողովի կառավարությունը կտապալվի»:

Քեմալական Թուրքիային փրկելու համար սույն փաստաթղթում արվում է հետևյալ առաջարկը. «Խորհրդային Ռուսաստանի ու համաշխարհային հեղափոխության համար կործանարար այդ հետևանքներից խուսափելու նպատակով մեզ անհրաժեշտ է. ա) ինչ գնով էլ լինի և ամենայն արտակարգությամբ աջակցել մարտող ազգային շարժմանը Թուրքիայում, բ) կանխել անգլո-շահական, հայկական և վրացական զինվորական ուժերի միավորումը: Ինչպես մեկը, այնպես էլ մյուսը կարող են ձեռք բերվել միայն թուրքական ազգայնական զորքերի հեպ միավորված, սեփական ժողովրդին ճնշող Դաշնակցության լծից ազատվելու և հեղափոխական Թուրքիայի հեպ միավորվելու դրոշի ներքո Հայաստանի վրա հարձակվելով»:

Եվ այսպես, Բաքվում գործող բուլղարիայի այս կազմակերպությունը՝ Մոսկվային առաջարկում է՝ Թուրքիային փրկելու համար կործանել Հայաստանի Հանրապետությունը, մի գործընթաց, որն անխուսափելիորեն պետք է իրականացվեր հայ ժողովրդի նոր ցեղասպանությամբ. որովհետև Հայաստանի ոչնչացումը՝ փաստաթղթի հեղինակների առաջարկով, հանձնարարվում էր թուրքական զորքերին: Առաջարկն, ինչպես նշվեց,

1 ԽՄԿԿ ԿԿԱ, ֆ. 64, գ. 29, ք. 58-62 (ընդգծումը մերն է - Ռ. Խ.)

արվել է սեպտեմբերի 17-ին, իսկ Թուրքիայի հարձակումը սկսվել է սեպտեմբերի 28-ին: Բացատրությունները, կարծում ենք, ավելորդ են:

Լենինը և իր նվիրյալները հրահրեցին քեմալական արշավանքը Հայաստանի առաջին Հանրապետության դեմ, որի հետևանքով զոհվեցին տարածաշրջանում ապրող հարյուր հազարավոր խաղաղ բնակիչներ: Լենինի համաձայնությամբ, քեմալական զորքերը 1920 թ. սեպտեմբերի 28-ին հարձակվում են Հայաստանի վրա: Թուրքական զորքերն այս անգամ արդեն Արևելյան Հայաստանում են շարունակում հայերի ցեղասպանությունը: Նոյեմբերի 29-ին հայ ժողովրդին փրկելու պատրվակով, Հայաստան են մտնում մահ ոռոսական զորքերը: Հայաստանը կիսվում է Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

Բերված նյութերը վկայում են, որ բուլղարացի, բուլղարիայի կուսակցությունը և այդ կուսակցության առաջնորդ Վ. Լենինը մեղսակից են հայերի ցեղասպանությանը:

Ստամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպանի նամակը
ընդունվելու և պատասխանատվություն ընդունելու մասին գրություն
գործընկերության մասին ընդունվելու և պատասխանատվություն ընդունելու
ընդունվելու և պատասխանատվություն ընդունելու մասին գրություն
Գաղափարականության մասին խորհրդի միջոցով և միջոցառումների միջոցով
ու միջոցառումների միջոցով խորհրդի միջոցով և միջոցառումների միջոցով
ընդունվելու և պատասխանատվություն ընդունելու մասին գրություն
մասին խորհրդի միջոցով և միջոցառումների միջոցով
Զասպար Բյուրի, Ազատ որմնադիրները (Նորմալությունները)
1 ժողովրդական իշխանության մասին խորհրդի միջոցով և միջոցառումների միջոցով
պատմություն (հատված) 1920-1921 թթ. խորհրդի միջոցով և միջոցառումների միջոցով

Երկու փաստաթուղթ 74
Ուղղված խորհրդի, Երևան, 1920 թ. խորհրդի միջոցով և միջոցառումների միջոցով
Թուրքիայի հանրապետության մասին խորհրդի միջոցով և միջոցառումների միջոցով
ինտերնետային կայքը 98

ԹՈՒՐԷ-ՄԱՍՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ



Թուրք-մասոնականությունն այսօր հպարտությամբ իր պատմությունը սկսում է 1909 թվականից, երբ թուրքական «Մեծ Արևելք» օթյակի մեծ վարպետ դարձավ Թալեաթը... Այսինքն՝ թուրք-մասոնականությունը, որն այսօր էլ կառավարում է հրեական ծագումով մասոն Քեմալ Աթաթուրքի հիմնած «հանրապետական» Թուրքիան, բոլոր առումներով ժառանգորդն ու իրավահաջորդն է երիտթուրքերի, հետևաբար, պատասխանատուն Հայոց ցեղասպանության:

Թուրք-մասոնականության ինտերնետային կայքը (թուրքերեն) կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ www.mason.org.tr



MASON.ORG.TR
HUR VE KABUL EDILMIS MASONLAR BÜYÜK LOJASI - 1909 TÜRKİYE



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	3
<i>Մեվլան Ջադե Ռիֆաթ</i> , Օսմանյան հեղափոխության մուք ծալքերը և Իթթիհատի հայաջինջ ծրագրերը (հատված)	5
<i>Ջոն Կիրակոսյան</i> , Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (հատված)	18
Ստամբուլում Մեծ Բրիտանիայի դեսպանի նամակ-գեկուցագիրը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարին (հատվածներ)	37
<i>Գասպար Տերտերեան</i> , Սիոնիզմի եւ պանթուրքիզմի առնչութիւնները եւ անոնց սպառնալիքը Հայաստանի լինելութեան (հատված)	61
<i>Ջասպեր Ռիդլի</i> , Ազատ որմնադիրները (Ֆրիմասոնները). Աշխարհի ամենահզոր գաղտնի կազմակերպության պատմություն (հատված)	71
Երկու փաստաթուղթ	74
<i>Ռուբեն Խուրշուդյան</i> , Եղեռնը և բոլշևիկները	79
Թուրք-մասոնականության պատմության ինտերնետային կայքը	98